

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ 100-ԱՄՅԱ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ



*Գիրքը տպագրվում է «Վարդանանք» կրթահամալիրի  
մեկենասությամբ:*

ԵՐԵՎԱՆ-2021

ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58  
Մ 261

*Գիրքը հրատարակվում է ԵՊՀ Մանկավարժության և կրթության  
զարգացման կենտրոնի գիտական խորհրդի երաշխավորությամբ:*

### **Խմբագիր՝**

ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ,  
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

### **Գիրքը հրատարակության պատրաստեցին՝**

պրոֆեսոր Ն. Հարությունյան,  
դոց., դոց. Ա. Ղազարյան, Ա. Աշիկյան, Լ. Հայրապետյան, Ա. Ալեք-  
սանյան, Մ. Ավետիսյան

### **Գրախոսներ՝**

Ռուզաննա Մարդոյան, մ. գ. դ., պրոֆեսոր  
Ռոբերտ Ազարյան, մ.գ.դ., պրոֆեսոր

Մ 261 ԵՊՀ մանկավարժության ամբիոնի 100-ամյա անցած ուղին:  
Խմբագիր՝ Ն. Հարությունյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2021, 144 էջ:

Գիրքը նվիրվում է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հիմնադրման  
100-ամյակին: Ներկայացվում է ամբիոնի գիտամանկավարժական 100-ամյա  
անցած ուղին՝ հիմնադրումից մինչև մեր օրերը:

ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-2519-4

© ԵՊՀ հրատ., 2021  
© Հարությունյան Ն., 2021



Երևանի պետական համալսարանի մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում գործող Մանկավարժության ամբիոնը տոնում է իր հարյուրամյակը: Համալսարանին գրեթե տարեկից ամբիոնը հիմնադրվել է 1921 թ. հոկտեմբերի 10-ին: Այս տարիների ընթացքում ամբիոնը, իսկ այնուհետև՝ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը, բազմաշերտ գործունեություն է ծավալել կրթության և գիտության ոլորտներում՝ պահպանելով կրթական ավանդույթները և որդեգրելով ինովացիոն մոտեցումներ: Ուշագրավ է նաև Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի գործունեությունը գիտահետազոտական ոլորտում, և դրա վառ ապացույցն են վերջին տարիներին լույս տեսնող բազմաթիվ մենագրությունները, դասագրքերը, մեթոդական ուղեցույցները, ինչպես նաև 2019 թվականից լույս տեսնող «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդեսը:

Այսօր ՄԿԶԿ-ն իրականացնում է երեք բարձրորակ և շատ պահանջարկված կրթական ծրագրեր մագիստրատուրայում և բակալավրիատում: Կենտրոնին հաջողվել է դառնալ ինովացիոն հարթակ, որտեղ փորձարկվում են և այնուհետև ներդրվում բազմաթիվ կրթական ինովացիոն մոտեցումներ:

Այսօր ուզում եմ շնորհակալություն հայտնել և շնորհավորել կենտրոնի ողջ պրոֆեսորադասախոսական անձնակազմին և մաղթել արդյունաբեր և արդյունավետ աշխատանք հաջորդ հարյուրամյակում:

**Էլինա Ասրիյան**  
**ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական**  
**մասնագիտությունների գծով պրոռեկտոր**



Հարգելի գործընկերներ, սիրելի ուսանողներ և շրջանավարտներ, այս տարի լրանում է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի 100-ամյակը, իսկ դա նշանակում է գիտակրթական արդյունավետ գործունեության երկար ու ձիգ ճանապարհ, ձեռքբերումներ և հաջողություններ, մեծ նվիրում, ստեղծագործ աշխատանք և երիտասարդ սերունդ կրթելու և դաստիարակելու մեծ առաքելություն:

Ստանձնելով Մանկավարժության ամբիոնի վարիչի պարտականությունները՝ ես իմ առջև դրել էի մի մեծ նպատակ՝ պահպանել մեր ավագ գործընկերների ստեղծած արժեքներն ու ձեռքբերումները, զարգացնել ու մի նոր որակի հասցնել ամբիոնի աշխատանքները՝ նպաստելով նրա վարկանիշի բարձրացմանը և Հայաստանում մանկավարժության զարգացմանը:

Եվ այսօր ես մեծ հպարտությամբ ու գոհունակությամբ կարող եմ ասել, որ Մանկավարժության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն իր մեծ ջանքերի ու նվիրումի և ստեղծագործ աշխատանքի շնորհիվ հավատարիմ է մնացել իր մեծ առաքելությանը՝ մեր երկրի, մեր ժողովրդի համար կրթել արժանի երիտասարդ սերունդ և մեծ ներդրում բերել Հայաստանում մանկավարժության զարգացման գործին:

Հարգելի գործընկերներ, սիրելի ուսանողներ և շրջանա-

վարտներ, այս տոնական օրով ուզում եմ սրտանց շնորհավորել բոլորիս Մանկավարժության ամբիոնի 100-ամյա հոբելյանական տարեդարձի առթիվ, մաղթել մեզ էլ ավելի ուժ, կորով ու եռանդ՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցի մեկնած լույսի ջահը անմար պահելու և այն էլ ավելի բոցավառելու համար:

Շնորհավոր ծնունդդ, Մանկավարժության ամբիոն:

**Նազիկ Հարությունյան**

**ԵՊՀ Մանկավարժության և կրթության զարգացման  
կենտրոնի տնօրեն, Մանկավարժության ամբիոնի վարիչ**



Շնորհավորանքի և երախտագիտության խոսքս եմ ուղղում 100-ամյա փառահեղ կենսագրություն կերտած ԵՊՀ մանկավարժության ամբիոնին:

Միրելի՛ գործընկերներ, անգնահատելի և անփոխարինելի է Ձեր ավանդը ոչ միայն մանկավարժության, այլ նաև սերունդների կրթության և դաստիարակության զարգացման պատասխանատու գործում:

Ուժը գիտելիք է, գիտելիքը՝ ուժ:

Անսպառ ուժ և հաջողություններ եմ մաղթում հայ դպրոցը, անաղարտ մայրենին և հայոց ոգին անկոտրում պահելու և պահպանելու բարդ ու աստվածահաճո գործում:

Դուք կրթության այն նվիրյալ առաքյալներն եք, որոնց սփռած լույսի ներքո դեռ բազում տարիներ շարունակվելու է նույնքան լուսավոր, պայծառ ու մրցունակ սերնդափոխություն:

Ծնունդդ շնորհավոր, հարազատ ամբիոն:

Խորին խոնարհում:

**Գայանե Սողոմոնյան**  
**«Վարդանանք» կրթահամալիրի հիմնադիր տնօրեն**

## ԱՌԱՋԱԲԱՆ

ԵՊՀ մանկավարժության ամբիոնը 100 տարվա կենսագրություն ունի և այդ տարիների ընթացքում ունեցել է մեծ ձեռքբերումներ ու նվաճումներ ինչպես կրթության, այնպես էլ գիտության ոլորտներում:

«ԵՊՀ մանկավարժության ամբիոնի 100-ամյա անցած ուղին» գիրքը նվիրված է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի 100 տարվա արդյունավետ գիտամանկավարժական գործունեությանը: Առաջին անգամ ԵՊՀ մանկավարժության ամբիոնի պատմության մեջ գրվում է գիրք, որը հանգամանորեն ու համապարփակ լուսաբանում է Մանկավարժության ամբիոնի անցած ուղին՝ հիմնադրման օրվանից մինչև մեր օրերը՝ ըստ արժանվույն գնահատելով մեր ավագ գործընկերների, մեր գիտնական-մանկավարժների մեծ ներդրումը Մանկավարժության ամբիոնի և գիտության զարգացման գործում: Եվ այսօր մենք ոչ միայն պահպանել ենք այդ արժեքները, այլև նայելով առաջ և համընթաց գնալով ժամանակի հետ՝ զարգացրել են դրանք՝ տալով մի նոր որակ ու մակարդակ:

Գրքում ներկայացվում է Մանկավարժության ամբիոնի առավելապես վերջին 30 տարիների ընթացքում իրականացրած արդյունավետ մասնագիտական կրթական գործունեությունը մագիստրատուրայի երկու՝ «Կրթության կազմակերպում» և «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» և բակալավրիատում մեկ՝ «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրերով:

Լուսաբանվում են Մանկավարժության ամբիոնի գիտահետազոտական լայնածավալ աշխատանքները Հայաստանում մանկավարժության տարբեր գիտաճյուղերի զարգացման գործում՝ Մանկավարժության տեսություն և պատմություն, Կրթու-

թյան կառավարում, Սոցիալական մանկավարժություն, Մանկավարժական արքեպիսկոպիա, Մանկավարժական վալեպիսկոպիա, Մանկավարժական անտրոպոլոգիա, Համեմատական մանկավարժություն, Երջանկության մանկավարժություն, Արվեստի մանկավարժություն, Մանկավարժական արքեպիսկոպիա, Մանկավարժական ռիսկաբանություն, Մանկավարժական քվալիմետրիկա, Մանկավարժական ինովատիկա, Ժամանցի մանկավարժություն, Մանկավարժական կանխատեսում (ֆուտուրոլոգիա), որոնց արդյունքում ամբիոնում պաշտպանվել է 3 դոկտորական և 20 թեկնածուական ատենախոսություն, և տպագրվել է 300-ից ավելի գիտական հոդված:

Ամբիոնն իր 100-ամյա գիտահետազոտական աշխատանքների արդյունքում տպագրել է 52 մենագրություն, 16 դպրոցական դասագիրք, 16 մեթոդական ձեռնարկ, 5 բուհական ձեռնարկ, «Մանկավարժական հանրագիտարան»՝ 2 հատորով, «Մանկավարժական բառարան» և ավելի քան 1500 գիտական հոդված՝ Հայաստանում, և՛ արտերկրում:

Գրքում ներկայացվել են նաև Մանկավարժության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը միջազգային տարբեր գիտաժողովներին Հունգարիայում, Լիբանանում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, ՌԴ-ում, Ուկրաինայում և Լեհաստանում:

Գրքում իր ուրույն տեղն ունի Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդի 8 տարվա գործունեության մեկնաբանությունը՝ 58 ատենախոսության պաշտպանություն, որից 7-ը՝ դոկտորական և 51-ը՝ թեկնածուական, այդ թվում 6-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Գրքում լուսաբանվում է նաև Մանկավարժության ամբիոնի սերտ համագործակցությունը Հայաստանի տարբեր բուհերի մանկավարժության ամբիոնների, Հայաստանում գործող միջազ-

գային կազմակերպությունների և ղեսպանատների հետ՝ մասնակցելով նրանց կրթական ծրագրերին, համատեղ կազմակերպելով միջազգային գիտաժողովներ:

2016 թ. կնքված միջբուհական պայմանագրի շրջանակում համագործակցության մեծ հնարավորություններ են բացվել Երևանի պետական համալսարանի և Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի մանկավարժության ամբիոնների համար:

2017 թ. և 2018 թ. համագործակցության պայմանագրեր են կնքվել նաև Ժեշովի համալսարանի (Լեհաստան), Օդեսայի Ուշինսկու անվան համալսարանի (Ուկրաինա) և Կիրովագրադի Լյոտնայա սկադեմիայի (Ուկրաինա) հետ:

Գրքում ներկայացված են նաև Մանկավարժության ամբիոնի կազմակերպած միջազգային գիտաժողովները՝ 2014 թ. (տարածաշրջանային), 2017 թ. (Եվրոպական և ԱՊՀ երկրների մասնակցությամբ) և 2019 թ. Ամառային դպրոցը (Գրացի համալսարանի մասնակցությամբ):

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի մանկավարժության ամբիոնը 2014 թվականից Եվրոպական կրթական հետազոտությունների ասոցիացիայի անդամ է:

Գիրքն ամբողջանում է Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողական կյանքի ներկայացմամբ: Ներկայացվում են ՈՒԳԸ և ՈՒԽ աշխատանքները և ուսանողական միջոցառումները, որոնք առավել իմաստավորում և ամբողջացնում են ուսանողների ուսումնառությունը Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում:


Գիրքն ավարտվում է Մանկավարժության ամբիոնի տարբեր տարիների ասպիրանտների և հայցորդների, «Կրթության կազմակերպում», «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրերի շրջանավարտների երախտագիտության խոսքերով:

«ԵՊՀ մանկավարժության ամբիոնի 100-ամյա անցած ուղին»

գիրքը Մանկավարժության ամբիոնի մի յուրատեսակ հաշվետվություն է համալսարանին, ուսանողներին, գործընկերներին և հասարակությանը, հաշվետվություն՝ կատարված այն հսկայական գիտակրթական գործունեության, որը միտված է եղել և ներկայումս էլ նպատակաուղղված է մեր երկրի կրթության համակարգի բարելավմանը, Մանկավարժության ամբիոնի ու գիտության զարգացմանը և մեր երկրի ու ժողովրդի համար արժանի երիտասարդ սերունդ կրթելու վեհ գործին:

ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի մանկավարժության ամբիոնի գիտակրթական առաքելության ճանապարհը և մանկավարժական մտքի թռիչքները շարունակական են:

**Նագիկ Հարությունյան**  
**ԵՊՀ Մանկավարժության և կրթության զարգացման**  
**կենտրոնի տնօրեն,**  
**Մանկավարժության ամբիոնի վարիչ**



## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«Հայրենիք ստեղծելը հերոսություն է, հայրենիք շենացնելը՝ առաքինություն», – այսպես էր կարծում Հայ առաքելական եկեղեցու Լուսավորչի գահի 130-րդ գահակալ Վազգեն Առաջինը՝ «հայրենիք» բառի մեջ տեսնելով մեր ինքնության խոր ու դարավոր արմատները, միևնույն ժամանակ՝ մեր պատմական հիշողության վերընձյուղված շիվի կողքին ներկայի կանաչ ու նորաթուխ սաղարթը»<sup>1</sup>:

20-րդ դարասկզբին հայ ժողովրդի կողմից հերոսության և առաքինության պոռթկուն մի քայլ էր ազատ երկիր, քաղաքացիական հասարակություն ձևավորելը:

Խառնակ ժամանակների անորոշությունից, կորուստներից ու անկումներից հետո Սարգսրապատի, Բաշ Ապարանի հերոսամարտերում աննկուն կամք ցուցաբերած, հաղթական, բայց սովի, արհավիրքների, Մեծ եղեռնի կոտորածների վերապրումները դեռ չհաղթահարած, վշտաբեկ ժողովրդի համախմբման համար Առաջին հանրապետությունը ուժեր էր կենտրոնացնում: Խնդիրների բազմազանության մեջ առաջինը գրագետ ու բարձրակարգ հասարակություն ունենալն էր, որը հնարավոր էր միայն կրթական գործի կազմակերպման պարագայում: 1919 թ., կարևորելով կրթության հարցը, որոշում է ընդունվում երկրում անվճար տարրական կրթություն կազմակերպելու մասին: Սակայն դրա կողքին դժվարին պայմաններում հայ մտավորականների շար-

<sup>1</sup> Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթներ, Գիրք երրորդ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1976, էջ 293:

քերում լայնորեն քննարկվում է նաև բարձրագույն դպրոց ունենալու հարցը:

Հատկապես մեծ ոգևորություն էր ապրում Հովհաննես Թումանյանը, որը շեշտում ու կարևորում էր. «Եվ պետք է ստեղծել Հայոց Համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ՝ Հայկական Համալսարան»<sup>2</sup>:

Թեև հասարակության որոշ շերտեր վաղաժամ համարեցին համալսարան ունենալու որոշումը, սակայն անկախ նման տարակարծություններից, համոզված լինելով գաղափարի իրավացիության մեջ՝ ՀՀ խորհրդարանը 1919 թ. մայիսի 16-ին որոշում ընդունեց Հայաստանի համալսարան հիմնելու մասին, որի «ծննդյան վկայականը» ստորագրվեց Առաջին հանրապետության կառավարության օրոք՝ 1919 թ. մայիսի 16-ին:

Այսպիսով՝ 20-րդ դարի առաջին կեսերին՝ փոթորկուն ժամանակների քուրայում, Արևելյան Հայաստանում մի խումբ մտավորականների համարձակ երազանքի արդյունքում ոչ միայն ծնունդ առավ Հայաստանի առաջին հանրապետությունը, այլև բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ համալսարանը:

Շենքային սուղ պայմանների պատճառով համալսարանը սկսեց գործել ոչ թե մայրաքաղաքում, ինչպես նախատեսված էր, այլ Ալեքսանդրապոլի առևտրային վարժարանի շենքում:

Ռեկտոր նշանակվեց վաստակաշատ գիտնական Յուրի Դամբարյանը:

Առաջինը բացվեց պատմալեզվագրական ֆակուլտետը, որի ղեկանն էր Մեսրոպ Եպիսկոպոսը:

Հայտարարվեց ընդունելություն: Արձագանքեցին միջնակարգ դպրոցն ավարտած 121 անձ, 139 կողմնակի ունկնդիր, որոնք միջ-

<sup>2</sup> «Հովհաննես Թումանյանը քննադատ», հոդվածների ժողովածու, Հայպետհրատ, Երևան, 1939, էջ 326:

նակարգ դպրոց չէին ավարտել, սակայն ունեին հասարակական որոշակի դիրք:

1920 թ. հունիսի 21-ին Մինիստրների խորհուրդը որոշում է բավարարել լուսավորության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի՝ համալսարանը մայրաքաղաք տեղափոխելու պահանջը:

Նույն թվականի աշնանը՝ հոկտեմբերի 16-ին, ուսուցչական սեմինարիայի շենքում պետք է վերսկսվեին դասերը, սակայն երկրում ստեղծված բարդ իրադրության պատճառով դասերը հետաձգվեցին մինչև դեկտեմբեր:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Դեռևս ոչ ոք չգիտեր, թե ապագայում ինչ ճակատագրի կարժանանար երկիրը, առավել ևս՝ ինչպես կգարգանար նորաթուխ համալսարանի կայացման գործընթացը նոր իշխանությունների օրոք:

1920 թ. Երևանի համալսարանը, որը վերանվանվեց Երևանի ժողովրդական համալսարան, ուներ ընդամենը երկու ֆակուլտետ՝ բնագիտական և հասարակագիտական: Ընդհատված պարապմունքերը վերսկսվեցին միայն 1921 թ. հոկտեմբերի 10-ին, սակայն նախկին երկու ֆակուլտետների փոխարեն արդեն գործում էր 5 ֆակուլտետ՝ մանկավարժական, տեխնիկական, խորհրդային շինարարության, արևելագիտության, գյուղատնտեսության:

Հանրապետությունը բանիմաց մանկավարժների կարիք ուներ թե՛ հանրակրթության ոլորտում և թե՛ բուհում:

ԵԴՀ մանկավարժության ամբիոնը ստեղծվել է 1921 թ. մանկավարժության ֆակուլտետի հիմնադրման հետ միաժամանակ: Իր 100 տարվա գիտակրթական գործունեության ընթացքում ունեցել է մեծ ձեռքբերումներ և նվաճումներ ինչպես կրթության, այնպես էլ գիտության ոլորտում: Մանկավարժության ամբիոնի կայացման և ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման ու զարգացման գործում իրենց ծանրակշիռ ներդրումն են ունեցել ճանաչված պրոֆեսորներ Գ. Էդիլյանը, Ա. Շավարշյանը,

Մ. Սանթրոպյանը, Ա. Մովսիսյանը, Հ. Քարամյանը, Թ. Ջուհարյանը, Հ. Մախչանյանը, դոցենտներ Ա. Իգնատյանը, Ս. Խուդոյանը, Ա. Մանուկյանը, Թ. Հուրիխանյանը, Թ. Բալասանյանը, Լ. Ալեքսանյանը:

Մանկավարժության ամբիոնի հիմնադիրների ստեղծած արժեքների պահպանման և զարգացման գործին այսօր իրենց մեծ վաստակն են բերում ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանը, դոցենտներ Գ. Բաբայանը, Վ. Գյուլբուդադյանը, Թ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը, Ա. Աշիկյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Ասատրյանը, Ա. Ալեքսանյանը, Լ. Հայրապետյանը, Մ. Ավետիսյանը և այլք:

ԵՊՀ մանկավարժության ամբիոնը հիմնադրման օրվանից իր կարևոր ներդրումն է ունեցել և այսօր էլ ունի Երևանի պետական համալսարանի գիտակրթական արդյունավետ գործունեության մեջ:

**Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը:** Այսօր ամբիոնում աշխատում է հիմնական դրույքով 12 դասախոս, ներքին համատեղությամբ՝ 9 դասախոս, արտաքին համատեղությամբ՝ 8 դասախոս: Ամբիոնում դասավանդում են 5 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 15 գիտությունների թեկնածու, դոցենտ, 2 մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ և 5 դասախոս: Ամբիոնն ունի մեկ դրույքով լաբորանտ: Ամբիոնում աշխատում են ինչպես ԵՊՀ, այնպես էլ հանրապետության տարբեր բուհերի դասախոսներ, ինչն էլ ապացույց է ներդաշնակ համագործակցության: Սահուն և լիարժեք է իրականացվում ամբիոնի սերնդափոխությունը: Ամբիոնը մասնագիտական ջանքեր է կիրառում հայցորդների կայացման և ինքնաիրացման գործում: Ամբիոնում առողջ են միջանձնային փոխհարաբերությունները և բարոյահոգեբանական մթնոլորտը:

# ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՓՈԲՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1919—1930 թթ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (1919 թ. ՄԱՅԻՍ-1920 թ. ԳԵՎԵՄԲԵՐ)

1920 թ. I—VI (Ազգայնագրապոլ)

1920 թ. VI—XII (Երևան)

ՊԱՏՄԱՆՁՎԱՐԱՆԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1920 թ. ԳԵՎԵՄԲԵՐ

ՀԱՍԱՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

1921 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՄԱՆԱՎԱՐՔԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԽՈՐՀՐԳ. ԵՐԱՐԱՐ.  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԽԻՎԱԳԻՏԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳՅՈՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

1922 թ. ՄԱՐՏ

ՄԱՆԱՎԱՐՔԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԽՈՐՀՐԳ. ԵՐԱՐԱՐ.  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԽԻՎԱԳԻՏԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳՅՈՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԲԺՇԿԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

1922—1928 ՈՒՍՏԱՐԻ

ՀԱՍԱՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԱՏՄԱՆՁՎԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳՅՈՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԲԺՇԿԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

## ԵՊՀ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ



**Գուրգեն Լեղիյան**

Համալսարանի մանկավարժության ֆակուլտետի հիմնադիրը մանկավարժ-հոգեբան, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Լեղիյանն է, որը դարձավ ֆակուլտետի առաջին ղեկանը և Մանկավարժության ամբիոնի հիմնադիր-վարիչը: Անգնահատելի է Գուրգեն Լեղիյանի մեծ ծառանգությունը Մանկավարժության ֆակուլտետի կազմակերպման ու ամրապնդման գործում:

Գ. Լեղիյանը ծնվել է Իջևան քաղաքում (նախկինում՝ գյուղ Քարվանսարա): Սովորել է տեղի ծխական, ապա՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցներում (1896-1898 թթ.): Այնուհետև ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական բաժինը (1898-1903 թթ.): Բարձր առաջադիմություն ցուցաբերելով՝ 1904 թ. մեկնել է արտասահման, սովորել Ենայի (Գերմանիա), Լայպցիգի (Գերմանիա) և Բեռլինի (Շվեյցարիա) համալսարաններում: 1909 թ. գիտությունների փիլիսոփայական դոկտորի աստիճան է ստացել «Քննադատություն Ցիլլերի ձևական աստիճանների» թեմայով ուսումնասիրության համար: Աշխատությունը 1912 թ. տպագրվել է հայերեն ու մեծ համբավ և ճանաչում բերել հեղինակին:

1909 թ. Գ. Էդիլյանը վերադարձել է հայրենիք և շուրջ 30 տարի զբաղվել մանկավարժական գործունեությամբ: Նա մանկավարժական աշխատանք է կատարել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1909-1914 թթ. Գևորգյան ճեմարանի դասարանական բաժնում դասավանդում էր տարբեր առարկաներ (հոգեբանություն, մանկավարժության տեսություն և պատմություն, փիլիսոփայություն, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, գերմաներեն), իսկ լսարանական բաժնում՝ փիլիսոփայություն, մանկավարժություն, հոգեբանություն ղեկավարում էր մանկավարժական գործնական պարապմունքները: 1914-1919 թթ. աշխատել է Ներսիսյան դպրոցում: 1916 թվականից՝ պատերազմական ծանր տարիներին, եղել է Կովկասի գաղթականական որբանոցների տեսուչ, կազմակերպել անապաստան երեխաների կրթության և դաստիարակության գործը:

1918 թ.՝ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, ստանձնել է հանրապետության տարրական դպրոցների տեսչի պարտականությունները: Երկրորդ հանրապետության առաջին տարիներին ղեկավարել է Գյումրու ամերիկյան որբանոցը:

1921 թ. Գ. Էդիլյանը հրավիրվել է համալսարան և նշանակվել մանկավարժության ֆակուլտետի ղեկան: Նա Երևանի պետական համալսարանի հիմնադիրներից մեկն է, համալսարանի մանկավարժության ու հոգեբանության առաջին դասախոսը: Դասավանդել է հոգեբանություն, մայրենի լեզվի մեթոդիկա: Ուսումնասիրել է ուսուցման տեսությունը, ընդհանուր և մանկավարժական հոգեբանությունը, զբաղվել հայոց լեզվի դասավանդման, մեթոդաբանության, դպրոցական դասագրքերի և ձեռնարկների ստեղծման, դատական հոգեբանության, գեղարվեստական երկի հոգեբանական վերլուծության, հայկական տառատեսակների և նրանց դյուրընթեռնելիության հարցերով: Հեղինակ է հոգեբանությանը, մանկավարժությանը, մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկային, հայ գրականության պատմությանը վերաբերող մի շարք աշխատությունների: Նրա գրչին են

պատկանում հետևյալ երկերը՝

- «Դասավանդման ձևեր», Վաղարշապատ, 1913 թ.,
- «Դասավանդման խնդիրներ», Էջմիածին, 1914 թ.,
- «Գաղթականական որբանոցներ», Թիֆլիս, 1917 թ.,
- «Աշխատանքի դպրոց», Էջմիածին, 1922 թ.,
- «Հայոց լեզվի մեթոդիկա», Թիֆլիս, 1923 թ.,
- «Դպրոցական շենք», Երևան, 1927 թ.,
- «Ձեռագրի ուսուցման մեթոդիկա», Երևան, 1927 թ.,
- «Ուղղագրության ուսուցման մեթոդիկա», Երևան, 1927 թ.:





## Արշավիր Շափարյան

Մանկավարժական մտքի հարստացման գործում բացառիկ ավանդ է ունեցել մանկավարժության ֆակուլտետի դասախոս, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշավիր Շափարյանը:

Արշավիր Շափարյանը ծնվել է 1884 թ. մայիսի 26-ին Նոր Բայազետում, ուսուցչի ընտանիքում: Տարրական կրթություն է ստացել Սուրմալու գավառի Իգդիր քաղաքում:

Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1896-1908 թթ.), Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1898-1906 թթ.), Ենայի համալսարանի, 1910-1914 թթ. նաև Լայպցիգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի մանկավարժության բաժինը: Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսորը մեր երկրի մանկավարժական կադրերի պատրաստման գործում բացառիկ ավանդ ունի: 1914-1918 թթ. աշխատել է Գևորգյան հոգևոր ճեմարանում, իսկ այնուհետև՝ 1918 թվականից, նշանակվել է Երևանի տարրական դպրոցների տեսուչ:

Նրա մանկավարժական բեղուն հայացքները 1921 թվականից մինչև 1934 թվականը ծառայեցվել են համալսարանի տարբեր ֆակուլտետների համար մանկավարժներ պատրաստելու ազնիվ գործին: Նրա շնորհիվ լուսաբանվեց հայ մանկավարժներից շատերի գործունեությունը, մոռացումից փրկվեցին անուններ, որոնք հայ մանկավարժական մտքի զարգացման ընթացքում եվրոպական հայտնի մանկավարժ տեսաբաններից դեռ տարիներ

առաջ առաջադեմ գաղափարներ են արտահայտել իրենց գործում և աշխատանքներում: Արշավիր Շավարշյանը մահացել 1960 թ. սեպտեմբեր 11-ին:

Պրոֆեսոր Ա. Շավարշյանը հայ մանկավարժության պատմության դասընթացի առաջին ստեղծողն է, մի շարք մենագրությունների հեղինակ: Նա «Հայ մանկավարժներ» երկհատորանոց քրեստոմատիայի հեղինակն է (1958 թ.): Երկարամյա և բեղմնավոր գործունեության ընթացքում պրոֆ. Շավարշյանը աճեցրել է բազմաթիվ գիտամանկավարժական կադրեր:





## Մուշեղ Սանթրոսյան

Մուշեղ Սանթրոսյանը ծնվել է 1894 թ. հունվարի 1-ին Դիլիջանում: Ավարտել է Դիլիջանի ծխական դպրոցը, այնուհետև՝ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը:

1922-1926 թթ. ավարտել է Մոսկվայի Ն. Կ. Կրուպսկայայի անվան կոմունիստական դաստիարակության ակադեմիան:

1926 թվականից վաստակաշատ մեծ գիտնականին տեսնում ենք Երևանի ժողովրդական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի պաշտոնում: Մուշեղ Սանթրոսյանը 1937 թ. ստանում է պրոֆեսորի կոչում, իսկ 1948 թ. արժանանում է մանկավարժական գիտությունների դոկտորի աստիճանին:

1957 թ. ընտրվել է ՌՍՖՍՀ մանկավարժական գիտությունների թղթակից անդամ:

Շուրջ 20 տարի ղեկավարելով ԵՊՀ մանկավարժության ամբիոնը՝ Մ. Սանթրոսյանը ևս զարգացրել է մանկավարժության պատմության գիտաճյուղը:

Մուշեղ Սանթրոսյանի մանկավարժական գործունեությունը սկսվել էր դեռևս երիտասարդ տարիներից: Նա եղել է Դիլիջանի շրջանային լուսբաժնի վարիչ, շրջգործկոմի նախագահի տեղակալ, ապա՝ գործկոմի նախագահ: 1934 թ. Մ. Սանթրոսյանը նշանակվել է Երևանի մանկավարժական ինստիտուտի դիրեկտոր, 1937 թ. աշխատել է որպես ուսուցիչների վերապատրաստման,

իսկ 1941 թ.' դպրոցների գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր:

Գրել է մի շարք մենագրություններ և գիտական հոդվածներ՝ նվիրված հայ մանկավարժության ու դպրոցի պատմությանը, որոնցից առանձնապես կարևոր են՝ «Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խ. Աբովյանը» (1958 թ.), «Մեսրոպ Թադիադյանը որպես մանկավարժ» (1959 թ.), «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի 1-ին կեսին» (1964 թ.) աշխատությունները:

1945 թ. ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը նրան շնորհել է գիտության վաստակավոր գործչի կոչում:






## Արգար Մովսիսյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արգար Մովսիսյանը ծնվել է 1905 թ. ապրիլի 1-ին Էրզրումի վիլայեթի Խնուս գավառի Խալչավուշ գյուղում: Ստացել է բարձրագույն կրթություն, ավարտել Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան:

1932-1934 թթ. աշխատել է Լուսավորության նախարարության բաժնի վարիչ, 1934-1935 թթ.՝ բարձրագույն կրթության վարչության պետ, 1944-1946 թթ.՝ Մանկավարժության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, 1946-1948 թթ.՝ լուսավորության փոխնախարար: 1932-1962 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում: 1962-1967 թթ. եղել է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ: Նա համոզված պնդում էր. «Մենք հավատացած ենք, որ աշխարհի բազմաթիվ մասերում գտնվող մոտավորապես 30.000 ձեռագրերում դեռ շատ կան ուշադրության արժանի, բայց անհայտության մեջ պահվող մանկավարժական իմաստություններ»:

Այսօր էլ ԵՊՀ մանկավարժության ամբիոնում որպես թանկ մատուցք պահպանվում է մեծ գիտնականի ինքնագիրն իր հեղինակած «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության» արժեքավոր մենագրության առաջին էջին:

Ա. Մովսիսյանը հեղինակ է 3 մենագրությունների՝ «Ակնարկ հին հայերենի կրթության մասին» (1939 թ.), «Ուրվագծեր հայ



դպրոցի և մանկավարժության պատմության» (1958 թ.), «Հայ դպրոցի և մանկավարժության պատմությունից, սկզբից մինչև 18-րդ դար» (1968 թ.): Նա տասնամյակներ շարունակ ուսումնասիրել է մագաղայա մատյանները, նրա գրչի տակ նոր բովանդակություն են ստացել միջնադարյան Հայաստանի բարձրակարգ դպրոցները, ճեմարանները, Գլաձորի և Տաթևի համալսարանները:

Պրոֆ. Մովսիսյանը Հայրենական պատերազմի մասնակից է: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, «Աշխատանքային կարմիր դրոշ» շքանշաններով: 1961 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:





## **Թորգոմ Զուհարյան**

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հաջորդ վարիչը մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թորգոմ Զուհարյանն է:

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի պատմության մեջ մեծ ավանդ ունի պրոֆեսոր Թ. Զուհարյանը, որն առաջին փորձն արեց ամբողջացնելու հայ դպրոցի և մանկավարժական մտքի 1500-ամյա պատմությունը, հեղինակեց նաև «Հայ գրականության մեթոդիկայի ձեռնարկ» ուսուցիչների համար:

Թ. Զուհարյանը ծնվել է 1905 թ. դեկտեմբերի 27-ին Կարսում: Ավարտել է Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցը և ինդուստրիալ տեխնիկումը: 1926-1930 թթ. սովորել և ավարտել է Երևանի համալսարանի մանկավարժության ֆակուլտետի պատմագրական բաժինը:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է:

Աշխատել է Եղեգնաձորի շրջանում որպես ժողկրթբաժնի վարիչ, ՀԽՍՀ լուսավորության մինիստրությունում՝ որպես տեսուչ, այնուհետև՝ գիտաշխատող, ապա՝ հայոց լեզվի և գրականության սեկտորի վարիչ: 1975-1980 թթ. եղել է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչը:

Զբաղվել է հայրենագիտության և պատմության դասավանդման հիմնախնդիրներով, հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկայի հարցերով:

Հրատարակել է «Հայրենագիտական աշխատանքը դպրոցում» (1949 թ.), «Սովորողների տնային աշխատանքը պատմությունից» (1951 թ.), «Սովետական Հայաստանի պատկան հուշարձանները» (1961 թ.) աշխատությունները:

Թ. Ջուհարյանը հեղինակ է հայոց լեզվի և գրականության դպրոցական և բուհական դասագրքերի ու ձեռնարկների, հայ դպրոցի և մանկավարժական մտքի ավելի քան 1500-ամյա պատմության, որը «Հայ գրականության մեթոդիկայի» հետ մեկտեղ հայ իրականության մեջ առաջին փորձն էր ամբողջացնելու հայ մանկավարժության այդ բնագավառի բազմադարյան նվաճումները:

Պրոֆ. Ջուհարյանին շնորհվել է վաստակավոր ուսուցչի կոչում, նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, Արովյանի անվան և մի շարք մեդալներով ու պատվոգրով:





## Արտավագդ Իգնատյան

1980-1987 թթ. ԵՊՀ մանկավարժության ամբիոնը ղեկավարել է վաստակաշատ գիտնական, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտավագդ Իգնատյանը:

Մանկավարժության խնդիրները հատուկ ուշադրության առարկա են եղել նաև Արտավագդ Իգնատյանի համար: Նա հանգամանորեն ուսումնասիրել է Լազարյան ճեմարանում կրթության գործի կազմակերպման հարցերը: Մանկավարժության ամբիոնի վարիչ Ա. Իգնատյանը հայ մանկավարժության պատմության լավագույն գիտականներից էր: Մեծանուն գիտնականի գրչին են պատկանում 2 մենագրություն և 5 տասնյակից ավելի գիտական հոդվածներ: Մեծ է նրա ներդրումը երիտասարդ գիտնականների պատրաստման գործում: Նրա սաներն այսօր ղեկավարում են հանրապետության տարբեր բուհերի մանկավարժության ամբիոնները: Ա. Իգնատյանն անբասիր մարդ էր, մեծ հայրենասեր և հրաշալի մանկավարժ:





## **Հենրիկ Մախչանյան**

1987-1995 թթ. ԵՊՀ մանկավարժության ամբիոնը ղեկավարել է Հենրիկ Մախչանյանը:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Մախչանյանը զարգացրել է մանկավարժություն գիտության մի շարք գիտաճյուղեր:

Ծնվել է 1926 թ. հունիսի 1-ին Թիֆլիսում: 1950 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռոմանագերմանական բաժինը (անգլերեն լեզու):

1963 թվականից եղել է մանկավարժական գիտությունների թեկնածու, 1984 թվականից՝ մանկավարժական գիտությունների դոկտոր: Պրոֆեսորի կոչում է ստացել 1986 թվականին:

Աշխատել է Կոտայքի շրջանի Ակունք գյուղի 8-ամյա դպրոցում որպես տնօրեն, Երևանի թիվ 1 և թիվ 29 միջնակարգ դպրոցներում հայոց լեզվի և գրականության, անգլերենի ուսուցիչ, դասավանդել է հանրապետության տարբեր բուհերում:

1964 թվականից աշխատել է ԵՊՀ մանկավարժության ամբիոնում: 1987-1995 թթ. եղել է նույն ամբիոնի վարիչը:

Հեղինակ է 7 մենագրության, 6 դասագրքի, մեթոդական ձեռնարկների և ավելի քան 200 գիտական հոդվածների:

Պրոֆեսոր Մախչանյանը եղել է Հայաստանի կրթության նախարարության գիտամեթոդական վարչության, ԵՊՀ և տարբեր բուհերի գիտական խորհուրդների և փորձագիտական հանձնաժողովների, մանկավարժության գծով գիտական աստիճան-

ներ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ, «Սովետական մանկավարժ» ամսագրի պատասխանատու քարտուղար, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

Պրոֆեսոր Մախչանյանը Հայաստանի կրթության համակարգի վերաբերյալ դասախոսություններ է կարդացել 1978 թ. Սիրիայում, 1982 թ.' Բելգրադում, 1995 թ.' Կալիֆոռնիայում:

Պարգևատրվել է Խ. Աբովյանի անվան մեդալով, 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 40 և 50-ամյակների հոբելյանական մեդալներով, Մագմանյանական մրցանակով և պատվոգրերով:





## Նագիկ Հարությունյան

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի արդյունավետ աշխատանքների պատասխանատվությունը 1996 թվականից առ այսօր ստանձնել է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նագիկ Հարությունյանը: Շարունակելով մանկավարժության պատմության էջերի հարստացումը՝ նա նոր լույսի տակ հանգամանորեն ներկայացրել է 19-րդ դարի հայ դեմոկրատ-մանկավարժ Առաքել Բահաթրյանի կյանքը, գիտամանկավարժական-հասարակական գործունեությունը և հոգեբանամանկավարժական հայացքները «Առաքել Բահաթրյան. Կյանքը և գործը» մենագրությունում:

Ն. Հարությունյանի գրչին են պատկանում մանկավարժության արդի հիմնահարցերը շոշափող 100-ից ավելի գիտական հոդվածներ, որոնք արժեքավոր գիտական ներդրում են մեր նորանկախ երկրի կրթության գործի արդյունավետ կազմակերպման համար: Նա հեղինակ է 3 մենագրության, 3 բուհական ձեռնարկի, 2 դպրոցական դասագրքի, ուսուցչի 2 մեթոդական ձեռնարկի, «Մանկավարժական հանրագիտարանի» երկհատորյակի և «Մանկավարժական բառարանի»:

Ն. Հարությունյանի կողմից կատարված ընդգրկուն հետազոտության արդյունքում վերլուծվել են հայ կրթական գործի կազմակերպման հարցերը սփյուռքում, որին էլ նվիրված է գիտնականի դոկտորական ատենախոսությունը, ինչպես նաև «Լիբա-

նանի և Սիրիայի հայկական դպրոցները» մենագրությունը:

Իր «Հայ մանկավարժ կաթողիկոսները» գրքով պրոֆեսոր Ն. Հարությունյանն առաջին անգամ ներկայացրել է Վազգեն Առաջին և Գարեգին Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսների գիտամանկավարժական գործունեությունը:

Բազմիցս դասախոսություններով հանդես է եկել արտերկրում. 1993 թ.՝ ԱՄՆ, 1998 թ.՝ Լիբանան, 1999 թ.՝ Սիրիա, 2001 թ.՝ Իրան: Նա մասնակցել է տարբեր երկրների միջազգային գիտաժողովներին. 1994 թ.՝ ԱՄՆ, 2000 թ.՝ Հունգարիա, 2002 թ.՝ Լիբանան, 2005 թ.՝ ԱՄՆ, 2009 թ.՝ Անգլիա:

Պրոֆ. Ն. Հարությունյանը ԵՊՀ գիտական խորհրդի անդամ է, ԵՊՀ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի գիտական խորհրդի նախագահը, համալսարանում գործող ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդի նախագահն է, «Կրթությունը 21-րդ դարում» միջազգային գիտամեթոդական հանդեսի գլխավոր խմբագիրը:

Մեծ է պրոֆեսոր Ն. Հարությունյանի վաստակը գիտական կադրեր պատրաստելու գործում: Վերջին 15 տարիների ընթացքում պրոֆեսոր Ն. Հարությունյանը պատրաստել է 2 գիտությունների դոկտոր, 17 գիտությունների թեկնածու, որից 6-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Պրոֆեսոր Ն. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտներն են՝ մանկավարժության տեսություն և պատմություն, սոցիալական մանկավարժություն, կրթության կառավարում, հայ կրթական գործը սփյուռքում, ֆրանսերեն լեզվի դասավանդման մեթոդիկա, մանկավարժական հոգեբանություն, երջանկության մանկավարժություն, մանկավարժական աքմեղոգիա, մանկավարժական ֆուտուրոլոգիա:

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ն. Հարությունյանի վաստակը հատուկ ուշադրության է արժանացել պետության և հասարակության կողմից: Ն. Հարությունյանի

գիտակրթական գործունեությունը 2009 թ. արժևորվել է ՀՀ ԿԳ նախարարի հուշամեդալով, 2014 թ. հունիսին՝ ՀՀ վարչապետի հուշամեդալով, իսկ 2014 թ. սեպտեմբերին ՀՀ նախագահի կողմից պրոֆեսոր Ն. Հարությունյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչում: 2016 թ. Մանկավարժության ամբիոնի 95-ամյակի կապակցությամբ Ն. Հարությունյանին շնորհվել է ԵՊՀ ոսկե մեդալ:

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության ճանապարհը շարունակական է:



Ամբիոնի դասախոսական կազմը 1980-ական թթ.



Ամբիոնի դասախոսները և մագիստրանտները, 2004 թ.




ԵՊՀ մանկավարժության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը,  
2021 թ.

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

2017 թ. հուլիսի 6-ին ԵՊՀ գիտխորհուրդը միաձայն որոշում կայացրեց Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն ստեղծելու վերաբերյալ (19 հուլիս, 2017 թ., ռեկտորի թիվ 133, 46 հրաման), իսկ 2017 թ. դեկտեմբերի 23-ին ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը հաստատեց ԵՊՀ գիտխորհրդի որոշումը: Մանկավարժության ամբիոնը դուրս եկավ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի կազմից, և Մանկավարժության ամբիոնի բազայի հիման վրա ձևավորվեց Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը: Վերջինս ԵՊՀ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ ու ՄԿԶԿ կանոնադրության (2018 թ., փետրվար) հիման վրա:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



ԵՊՀ մանկավարժության ամբիոնը 100 տարվա կենսագրություն ունի և այդ տարիների ընթացքում ունեցել է մեծ ձեռքբերումներ և նվաճումներ: Այսօր ամբիոնի պրո-

ֆեսորադասախոսական կազմն ըստ արժանվույն արժևորել և գնահատել է մեր ավագ գործընկերների, մեր գիտնական-մանկավարժների մեծ ներդրումը մանկավարժության զարգացման գործում:

Եվ այսօր նրանք ոչ միայն պահպանել, այլև առաջ նայելով և ժամանակի հետ համընթաց գնալով՝ զարգացրել են այն՝ այդ ներդրմանը տալով նոր որակ ու մակարդակ: ԵՊՀ մանկավարժության ամբիոնն իրականացնում է արդյունավետ մասնագիտական կրթական գործունեություն երեք կրթական ծրագրով:



Ամբիոնի աշխատանքային առօրյան, 2021 թ.



Ամբիոնի աշխատանքային առօրյան, 2021 թ.

## «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



1998 թ. առաջին անգամ հանրապետությունում Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայում բացվեց «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագիրը, որը պատրաստում է կրթության կազմակերպիչներ հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտների համար: Կրթական ծրագիրը կրթության կազմակերպիչներ է պատրաստում ոչ միայն Հայաստանի, այլև սփյուռքի ամենօրյա հայկական դպրոցների համար:

«Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագրի շրջանակներում կրթական գործի ապագա կազմակերպիչները տեղեկանում են ՀՀ կրթության համակարգի, նրա կառուցվածքի, ինչպես նաև կրթական բարեփոխումների մասին, որոնք կարևոր նշանակություն ունեն կրթության որակի ապահովման և զարգացման գործում: Հանգամանորեն վերլուծվում և քննարկվում են կրթական քաղաքականության նպատակները, խնդիրները, ռազմավարությունը, առանձնահատկությունները և իրականացման ճանապարհները: «Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագրում ուսանելու տարիներին ուսանողները ծանոթանում են կրթության ոլորտը կարգավորող նորմատիվ փաստաթղթերին, օրենսդրական դաշտին, անհրաժեշտ գիտելիքներ են ձեռք բերում ՀՀ բյուջետային համակարգի և կրթական գործունեության ֆինանսավորման եղանակների մասին:

«Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագրի

շրջանակներում ուսանողներին ներկայացվում են կրթության համակարգի կառավարման նպատակը, խնդիրները, գործունեության չափանիշները, տեսությունները, սկզբունքները, գործառույթները, մեթոդներն ու ոճերը, կառավարման ենթահամակարգերը, կառավարող սուբյեկտների գործունեությունն ու իրավասությունների շրջանակը: Այս ամենի արդյունքում կրթական գործի ապագա կազմակերպիչները գիտամանկավարժական պրակտիկայի ընթացքում կարողանում են տեսական գիտելիքները կիրառել կոնկրետ իրավիճակում, ճկուն, արագ դիրքորոշումներ ունենալ, հիմք ընդունել կառավարման սկզբունքներն ու մեթոդները, այս կերպ բարձրացնել կառավարման արդյունավետությունը:

2006 թվականից այս կրթական ծրագրում անհատական գրաֆիկով սովորել և սովորում են սփյուռքահայ ուսուցիչներ և տնօրեններ Լիբանանից, Սիրիայից, Թուրքիայից, Եգիպտոսից և Իրանից:

Մանկավարժության ամբիոնի «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագիրը լուրջ առաքելություն ունի: Նրան է վերապահված մասնագիտական լուրջ հնարավորություններով օժտված կրթության ոլորտի վարչական անձնակազմի պատրաստումը:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ այսօր Հայաստանի Հանրապետության հանրակրթական և բարձրագույն դպրոցներին անհրաժեշտ են ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքներով զինված բանիմաց կառավարիչներ, արդիական է նրանց մասնագիտական պատրաստումը:

«Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագրի տևողությունը երկու տարի է, որի ավարտին շրջանավարտը ստանում է կրթության մագիստրոսի աստիճան և կրթության կազմակերպչի որակավորում:

Գործում է նաև մագիստրոսական ծրագրի հեռակա ուսուցման համակարգը. ուսման տևողությունը 2,5 տարի է:



Մազիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովի ամբիոնի դասախոսների հետ, 2016 թ.



«Կրթության կազմակերպում» մազիստրոսական ծրագրի ուսանողները (EXPO-2014)



Պրոֆ. Ն. Հարությունյանը մագիստրանտների հետ, 2014 թ.



Մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովը, 2005 թ.



Դոց. Ռ. Հարությունյանը մագիստրանտների հետ, 2007 թ.



Ամբիոնի դասախոսները սփյուռքահայ ուսանողների հետ, 2009 թ.



Ամբիոնի դասախոսները և ուսանողները «EXPO-2014»-ին



Ամբիոնի դասախոսները և աշխատակիցները, 2021 թ.

## «ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



2016-2017 թթ. ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնը բացել է երկրորդ մագիստրոսական կրթական ծրագիրը՝ «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»:

Ծրագրի նպատակն է պատրաստել ուսուցիչներ հանրակրթական դպրոցների համար:

Կրթական ծրագիրը նախատեսված է այն անձանց համար, որոնք ունեն բակալավրի աստիճան կամ դիպլոմավորված մասնագետներ են, սակայն չունեն ուսուցչի որակավորում:

Կրթական ծրագրին կարող են դիմել նաև դպրոցում գործող ուսուցիչները, որոնք չունեն մանկավարժի որակավորում:

Ուսումնառության ավարտին տրվում է մանկավարժության մագիստրոսի աստիճան և ուսուցչի որակավորում:

Կրթական ծրագրի տևողությունը 1,5 տարի է, ուսուցման ձևը՝ հեռակա:



Ամբիոնի ասիստենտ Մ. Հովհաննիսյանի խորհրդատվությունը  
մագիստրանտին, 2021 թ.



«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողների մանկավարժական պրակտիկան դպրոցում, 2021 թ.

## «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏՈՒՄ



ԵՊՀ մանկավարժության ամբիոնը կրթության ոլորտում մշտապես ներկայանում է նորարարի և նախաձեռնողի իր ինքնատիպ ձեռագրով: Այս առումով ուշագրավ էր նաև 2010 թ. Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ ու ջանքերով բակալավրիատում «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի բացումը:

Մանկավարժության ամբիոնի բազմամյա փորձը, վաստակաշատ պրոֆեսորադասախոսական կազմը, հրավիրյալ մասնագետները և երիտասարդ գիտնականների ներուժը շատ լավ հնարավորություն և խոստումնալից հիմքեր էին ստեղծում մի նոր մասնագիտական կրթական ծրագրի ներդրման համար, որը ժամանակի հրամայական էր դարձել հայ հասարակության առջև:

Սոցիալական մանկավարժի մասնագիտության ձևավորումն ու կայացումը պայմանավորված էին պատմամշակութային նախադրյալներով, որոնք ունեին սոցիալ-հոգեբանական, ինչպես նաև էթնոգրաֆիկ առանձնահատկություններ և որոշվում էին հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով:

Ճիշտ է այս մասնագիտությունը նոր է մեր երկրում, սակայն սոցիալ-մանկավարժական աջակցությունն արմատավորված է հայ հասարակությունում, և հատկապես փոխօգնության պատրաստակամությունը մեզանում նոր երևույթ չէր: Աջակցության կարիք ունեցող երեխաներին օգնությունը հայ հասարակություն-

նում կարգավորված է բարոյական նորմերով և բխում է ազգային արժեքների առանձնահատկություններից: Այդ ավանդույթը չի մարում «օրինակի» ուժով, քանզի օրինակ ծառայողների կերպարներն ընդօրինակվում են, ներքնայնացվում, որի արդյունքում տեղի է ունենում նույնականացում, ինչն էլ մեր ազգային ինքնության կարևոր և հուզական բաղադրիչն է: Այս ամենը կազմում է սոցիալական մանկավարժի մասնագիտության ձևավորման ու կայացման, պատմամշակութային նախադրյալների ժողովրդագրական հիմքերը:

Հայ հասարակության պայմաններում սոցիալական մանկավարժի մասնագիտության ձևավորման ու կայացման պատմամշակութային նախադրյալների սոցիալ-հոգեբանական բաղադրիչը ևս ունի իր յուրահատուկ մեկնաբանությունը: Հայի հոգեբանության մեջ արմատացած է, որ Հայաստանն առաջին պետությունն է, որն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, և դա պարտավորեցնող է հայ մարդու համար, ինչը նշանակում է, որ պետք է հոգ տանել միմյանց, հատկապես այն մարդկանց նկատմամբ, որոնք ունեն տարաբնույթ խնդիրներ: Օգնության հասնելը բարեխիղճ քրիստոնյայի հիմնական բնութագրիչներից մեկն է, այնպիսի օգնություն, որը կարող է բնութագրվել որպես անձնուրաց, հանդուրժող, ինքնանվիրումով ու սիրով իրականացվող: Արժանավայել ու բարեխիղճ քրիստոնյայի կերպարն արմատացած է մեր ինքնության մեջ և կարևոր է հայ մարդու համար ոչ միայն որպես սեփական խղճի առաջ պատասխանատու լինելու մեխանիզմ, այլև օգնության կարիք ունեցող մարդկանց աջակցելու տեսանկյունից: Հայ ժողովրդի պատմության ընթացքն ունի դրա վաղ օրինակը: Ինչպես գիտենք հայ ժողովրդի պատմությունից, Հայաստանում մանկատներն առանձնապես տարածում չեն ունեցել. նույնիսկ դեռևս Մեծ եղեռնի տարիներից հետո, երբ ամերիկյան մանկատներ էին բացվում Հայաստանում որք երեխաների համար, այդ երեխաներին շատ արագ որդեգրում էին հայ ընտանիքները՝ նշելով, որ «հայ երե-

խան չպետք է մանկատանը մեծանա»։ Դա նշանակում է, որ մեզանում շատ խիստ ու բարոյական նորմերով կարգավորված է եղել միմյանց մասին հոգ տանելը:

Հայ հասարակությունում ընտանեկան դաստիարակության մոդելը ևս յուրահատուկ է և առանձնանում է նրանով, որ ընտանիքի փոքր անդամների մասին հոգ է տարվում ընտանիքի մեծահասակների կողմից մինչև փոքրերի լիարժեք ինտեգրումը հասարակություն, և երբեմն նույնիսկ դրանից հետո էլ շարունակվում է այդ աջակցությունը՝ կրելով մշտական, ինչու չէ, նաև չափազանցված բնույթ:

Ժամանակակից շրջանում արդի հասարակական փոխակերպումների, սոցիալ-տնտեսական ճգնաժամների, հետպատերազմական հոգեբանության, բնական աղետի թողած հետևանքների, մշակութային ու ազգային արժեքների պահպանման պայմաններում մեր հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները վերջին տասնամյակներում առաջ են բերել նոր հրատապ լուծում պահանջող հիմնախնդիր, այն է՝ երեխաների սոցիալականացման համապատասխանեցումը 21-րդ դարի պահանջներին: Քանզի այսօր մեծաթիվ են մանկատան երեխաները մեզանում, աճում է շեղվող վարք ունեցող երեխաների, անչափահասների շրջանում հանցագործությունների, ալկոհոլի, ծխախոտի նկատմամբ հակում ունեցող անչափահասների թիվը: Հենց այս ամենն էլ իր հերթին պատճառ է դառնում ֆիզիկական զարգացման հապաղումների և արատավոր այլ երևույթների տարածման համար:

Այս բոլորը կազմում էին այն նախադրյալները, որոնք տեսական և գործնական հիմք էին ստեղծում Հայաստանում սոցիալական մանկավարժի մասնագիտության ներմուծման և հետագա կայացման համար: Նախ սոցիալական մանկավարժի մասնագիտության ներմուծումը ՀՀ-ում կարգավորվեց իրավական հիմքերով: Մշակվեց և կառավարության կողմից հաստատվեց ՀՀ հանրակրթության պետական կրթակարգ, որում ամրագրվեց, որ ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցները պետք է ունենան սոցիա-

լական մանկավարժի հաստիք:

Եվս մի կարևոր հանգամանք: Մեր դպրոցներում ներկայումս ներառական կրթություն է իրականացվում: Այսօր սահմանափակ կարողությունների տեր երեխաներն ինտեգրվում են հանրակրթական դպրոց, իսկ այդ երեխաները հաղորդակցական խնդիրներ ունեն, որովհետև նրանք տարբեր կարիքների տեր են, հետևաբար այստեղ դարձյալ կա սոցիալական մանկավարժի կարիք՝ առավել դյուրին դարձնելու համար նրանց միասնական կրթական գործունեությունը: Այս երեխաների խնդիրների լուծման հարցում սոցիալական մանկավարժը պետք է համագործակցի, իհարկե, հատուկ մանկավարժների և հոգեբանների հետ: Ուրեմն պետականորեն, հասարակության պահանջով, սահմանափակ կարողությունների տեր երեխաների հիմնախնդիրներով պայմանավորված՝ մեր հանրակրթական դպրոցներում առաջացավ սոցիալական մանկավարժի գործունեության իրականացման անհրաժեշտություն: Հենց դա էր պատճառը, որ սոցիալական մանկավարժի ինստիտուտի ձևավորումը դարձավ ժամանակի հրամայականը:

Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնի բակալավրիատի «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի նպատակը դարձավ Հայաստանի հանրակրթական դպրոցների համար պատրաստել սոցիալական մանկավարժներ, որոնք կնպաստեն վերոնշյալ խնդիրների լուծմանը՝ ելնելով իրենց մասնագիտական գործունեության նպատակից, խնդիրներից, գործառույթներից, թիրախային խմբերի առանձնահատկություններից, տեխնոլոգիաներից և այլն: Կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին ներկայացնել սոցիալական մանկավարժության ուսումնասիրության հիմնախնդիրները, մեկնաբանել սոցիալական միջավայրի դաստիարակչական մեծ ներգործությունը տարբեր տարիքային խմբերի և տարբեր սոցիալական խնդիրներ ունեցող երեխաների զարգացման գործընթացի վրա սոցիալականացման համատեքստում:

Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժն իրականացնում է հետևյալ գործառնությունները. նա ուսումնասիրում, հետազոտում, ակնարկում է աշակերտի առջև ծառացած խնդիրը, այնուհետև այն լուծելու համար օգնում, աջակցում, ուղղորդում, վերադաստիարակում, խորհրդատվություն և վերականգնողական (հոգեբանամանկավարժական) աշխատանքներ է իրականացնում: Սրանք կատարվում են տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների միջոցով:

Այժմ բոլոր դպրոցներն ունեն սոցիալական մանկավարժի հաստիքի իրավունք: Սոցիալական մանկավարժը մեզանում ձեռք է բերում երեխայի իրավունքների պաշտպանի, դաստիարակության, արդյունավետ և համակարգված օգնության, երեխաների աջակցության խորհրդանիշ:

Սոցիալական մանկավարժի գործունեության նպատակը երեխաների արդյունավետ սոցիալականացման ու սոցիալական հարմարման համար անվտանգ պայմանների ստեղծումն է, երեխայի պահանջմունքների բավարարմամբ սոցիալական, իրավական, հոգեբանական, բժշկական և սոցիալ-մանկավարժական մեխանիզմներով կանխարգելելն ու բացասական երևույթների հաղթահարումը երեխայի կյանքում, նրա ընտանիքում, դպրոցում, նրան շրջապատող միջավայրերում:

Սոցիալական մանկավարժի գործունեության մասնագիտական խնդիրն է օգնել սոցիալականացման և հասարակություն ինտեգրվելու գործընթացում աջակցության կարիք ունեցող երեխաներին:

Սոցիալական մանկավարժի գործունեության առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, թե որտեղ է իրականացվում այդ գործունեությունը: Իսկ սոցիալ-մանկավարժական գործունեությունն իրականացվում է երեք ոլորտներում՝ ընտանիքներում, կրթական հաստատություններում, հատուկ հաստատություններում: Սոցիալ-մանկավարժական գործունեությունն այնքան է կարևորվում այսօր, որ միտում կա

առողջապահական հիմնարկները ևս դիտարկելու որպես առանձին ոլորտ:

Ըստ ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» համաձայնագրի՝ սոցիալական մանկավարժի գործունեության ամենակարևոր ուղղություններից է երեխաների կյանքի և առողջ զարգացման, կրթություն ստանալու և սեփական հայացքների ազատ արտահայտման իրավունքների պաշտպանությունը:

Սոցիալ-մանկավարժական գործունեությունը և սոցիալական մանկավարժի մասնագիտությունը ենթադրում են մասնագետի հատուկ պատրաստվածություն, այնպիսի մասնագետի, որն ունի մասնագիտական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգ և կարող է աջակցել սոցիալական, դաստիարակչական և բարոյահոգեբանական աջակցության կարիք ունեցող անձանց:

Հենց այդ ամենի նպատակով սոցիալական մանկավարժության բաժնում դասավանդվում են հատուկ ընտրած մասնագիտական և ընդհանուր զարգացվածություն ապահովող առարկաներ, ինչպես նաև իրականացվում է մասնագիտական պրակտիկա դպրոցներում, որն անհրաժեշտ է հատուկ առաքելություն ունեցող մասնագետներին հասարակությունում լիարժեք գործելու և այն դեպի զարգացում տանելու համար:

Բակալավրիատի «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրում ուսումնառությունը չորս տարի է, որի ավարտին շրջանավարտը ստանում է մանկավարժության բակալավրի և սոցիալական մանկավարժի որակավորում:

Տասը տարիների ընթացքում այս կրթական ծրագիրը տվել է շուրջ 300 շրջանավարտ, որոնք տարբեր հաջողություններ են արձանագրել իրենց հետագա ուսումնառության և աշխատանքային գործունեության կազմակերպման մեջ:



«Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի ուսանողները դասախոսների հետ, 2015 թ.



«Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի ուսանողները «EXPO-2014»-ին



«Մոցիական մանկավարժություն» կրթական ծրագրի տարբեր տարիների շրջանավարտները

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի մանկավարժության ամբիոնը բակալավրիատի «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի շրջանակներում կազմակերպում է 4-րդ կուրսի ուսանողների մասնագիտական պրակտիկան հանրակրթական դպրոցներում, որտեղ ուսանողներն ակտիվորեն մասնակցում են սոցիալ-մանկավարժական աշխատանքներին և իրականացնում խորհրդատվական, աջակցող, ախտորոշիչ, վերականգնողական, ինչպես նաև սոցիալական մանկավարժի այլ գործառույթներից բխող գործունեություն:

Պրակտիկայի ընթացքում ուսանողներն իրականացնում են նաև ինքնուրույն անհատական հետազոտական աշխատանքներ, որոնք բխում են նրանց դիպլոմային աշխատանքների թեմաներից:

**Մասնագիտական պրակտիկան մագիստրատուրայում իրականացվում է հետևյալ կրթական ծրագրերում.**

- «Կրթության կազմակերպում» կրթական ծրագիր,
- «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր:

«Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում կրթական գործի ապագա կազմակերպիչները մասնագիտական պրակտիկան անցկացնում են ՀՀ դպրոցներում և բուհերում: Պրակտիկան հնարավորություն է ըն-

ձեռում ուսանողներին տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, որոշակի իրավիճակներում ճկուն և արագ որոշումներ կայացնելու՝ հիմք ընդունելով կառավարման սկզբունքներն ու մեթոդները:

«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողներն իրենց մանկավարժական պրակտիկան անցկացնում են ՀՀ տարբեր դպրոցներում՝ մանկավարժական տեսական գիտելիքները կիրառելով գործնականում (2-րդ և 3-րդ կիսամյակներում, յուրաքանչյուր կիսամյակում՝ 4 շաբաթ):

2016-2017 թթ. ուստարվանից ԵՊՀ 12 ֆակուլտետներում մեկնարկել է մանկավարժի որակավորման շնորհման նոր համակարգ, որի իրագործման արդյունքում նշյալ ֆակուլտետների ուսանողները, բացի մասնագիտական որակավորումից, ստանում են նաև մանկավարժի որակավորում: ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված մանկավարժի որակավորման շնորհման «240+30 կրեդիտ» նոր համակարգով ուսանողներն անցնում են մանկավարժական պրակտիկան ուսումնառության 6-րդ և 8-րդ կիսամյակներում:

Երկամյա մանկավարժական պրակտիկան հնարավորություն է տալիս ուսանողներին տեսական գիտելիքները կիրառելու գործնականում՝ ուսուցման գործընթացում ստուգելով դրանց որակն ու հիմնարարությունը:

Կադրեր մասնագիտական  
պրակտիկայից





Կադրեր մասնագիտական  
պրակտիկայից



## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲԻՈՆՈՒՄ

2000 թվականից մինչ օրս ԵՊՀ մանկավարժության ամբիոնում բարձր մակարդակով կազմակերպվում են «Կրթության կազմակերպում» և «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի և «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի ավարտական աշխատանքների պաշտպանությունները: Այդ աշխատանքները ներկայացվում են հանձնաժողովին ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ներկայացվող աշխատանքների թեմատիկան ընդգրկում է կրթության ոլորտի արդիական հիմնախնդիրները: Հենց այդ է պատճառը, որ հանձնաժողովի անդամները, որոնք տարբեր բուհերի մասնագետներ են, պաշտպանությունների վերջում փաստում են աշխատանքների բարձր գիտական մակարդակը, ուսանողների կատարած ինքնուրույն հետազոտական աշխատանքների որակը՝ բարձր գնահատելով ուսանողների վերլուծա-համադրական մտածողությունը և նյութի մատուցման կարողությունները:

«Մոցիական մանկավարժություն» կրթական ծրագրի ավարտական աշխատանքների պաշտպանությունը, 2016 թ.





Մանկավարժության ամբիոնի շրջանավարտները, 2019 թ.

## «ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿՈՒՐՍՂԵՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում արդյունավետ է կազմակերպվում կուրսղեկների գործունեությունը: Կուրսղեկը, իրապես, կոչված է կազմակերպելու և ուղղորդելու իր կուրսի ուսանողների արդյունավետ ուսունառությունը, կարգապահությունը, նաև ուսանողական ակտիվությունը: Նման կարգախոսով առաջնորդվելով՝ կուրսղեկներն արդյունավետորեն իրագործում են ֆասիլիտատորի իրենց դերը կուրսերում: Մանկավարժության ամբիոնի դասախոս-կուրսղեկները լուծում են կուրսում ծառացած ոչ միայն կրթական, այլև սոցիալական և տարաբնույթ այլ խնդիրներ:



«Մոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի կուրսղեկները ուսանողների հետ, 2018 թ.

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Բեղմնավոր է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի գիտահետազոտական գործունեությունը: Մանկավարժության ամբիոնն իր գործունեության 100 տարիների ընթացքում կատարել է հսկայածավալ գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքում տպագրվել են 51 մենագրություն, 16 դպրոցական դասագիրք, ուսուցչի 16 մեթոդական ձեռնարկ, 7 բուհական ձեռնարկ, մանկավարժական հանրագիտարան՝ 2 հատորով, մանկավարժական բառարան, ավելի քան 1650 գիտական հոդված և Հայաստանում, և՛ արտերկրներում (Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Ուկրաինա, ԱՄՆ, Հունգարիա, Գերմանիա, Լիբանան, Ավստրիա, Իսպանիա, Բելգիա):

Հսկայական են ամբիոնի կատարած աշխատանքները մանկավարժության նորագույն գիտաճյուղերի կայացման և զարգացման գործում: Վերջին 25 տարիների ընթացքում մանկավարժության ամբիոնն իր հրատարակած գիտական աշխատանքներով զարգացրել է *մանկավարժության 14 գիտաճյուղ*՝ մանկավարժության պատմություն, համեմատական մանկավարժություն, սոցիալական մանկավարժություն, կրթության կառավարում, մանկավարժական վալեոլոգիա, մանկավարժական աքսեոլոգիա, մանկավարժական անտրոպոլոգիա, մանկավարժական ինովատիկա, երջանկության մանկավարժություն, արվեստի մանկավարժություն, մանկավարժական աքմեոլոգիա, մանկավարժական ֆուտուրոլոգիա, մանկավարժական քվալիմետրիա և մանկավարժական ռիսկաբանություն:

25 տարիների ուսումնասիրությունների արդյունքում տպագրվել է շուրջ 300 գիտական հոդված ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրների գիտական հանդեսներում:

Մանկավարժության ամբիոնը գիտական կադրեր է պատրաստում ոչ միայն Հայաստանի, այլև սփյուռքի և Իրանի Իսլամական Հանրապետության համար: Ներկայումս ամբիոնում սովորում են 2 հայցորդ Հայաստանից և 2 ասպիրանտ Իրանից:

2012 թվականից Մանկավարժության ամբիոնի կազմի հիման վրա և հանրապետության տարբեր բուհերի առաջատար մասնագետների մասնակցությամբ Մանկավարժության ամբիոնին կից գործում է ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող Մանկավարժության 065, այժմ՝ 058 մասնագիտական խորհուրդը՝ ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» թվանիշով: Մասնագիտական խորհրդի նախագահն է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Կ. Հարությունյանը, գիտական քարտուղարը՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Ղազարյանը: Մանկավարժության մասնագիտական խորհուրդը 2012 թ. մարտից մինչև 2021 թ. հունիսը կազմակերպել է 59 ատենախոսության պաշտպանություն, որից 7-ը՝ դոկտորական, 52-ը՝ թեկնածուական, այդ թվում՝ 6-ը Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Վերջին 20 տարիների ընթացքում Մանկավարժության ամբիոնը մանկավարժության ոլորտին տվել է 4 գիտությունների դոկտոր, 18 գիտությունների թեկնածու, որից 6-ը՝ ԻԻՀ քաղաքացի:

Այսօր Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդի գործունեությունը գիտական համագործակցության արդյունք է հանրապետության տարբեր բուհերի առաջատար մասնագետների հետ, որոնք իրենց ներդրումն ունեն մանկավարժության զարգացման գործում:

ԵՊՀ մանկավարժության ամբիոնն իրականացնում է արդյու-

նավետ գործունեություն տարբեր երկրների միջազգային գիտա-  
ժողովներին մասնակցելով. 1994 թ.՝ ԱՄՆ, 2000 թ.՝ Հունգարիա,  
2002 թ.՝ Լիբանան, 2005 թ.՝ ԱՄՆ, 2009 թ.՝ Անգլիա, 2009 թ.՝ Գեր-  
մանիա, 2010 թ.՝ Հունգարիա, 2010 թ.՝ Գերմանիա, 2011 թ.՝ Շվեյ-  
ցարիա, 2012 թ.՝ Իսպանիա, 2013 թ.՝ Ավստրիա, 2014 թ.՝ Գերմա-  
նիա, 2016 թ.՝ Շվեյցարիա, 2020 թ.՝ ՌԴ:

Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամ-  
բիոնը ոչ միայն մասնակցում է այլ երկրների միջազգային գիտա-  
ժողովներին, այլ նաև կազմակերպում է միջազգային գիտաժո-  
ղովներ և կլոր սեղաններ Հայաստանում: Այսպես՝ 1997 թ. մայի-  
սին Մանկավարժության ամբիոնը կազմակերպել է միջազգային  
գիտաժողով՝ «Անչափահասների դաստիարակության հիմնա-  
հարցերը շուկայական հարաբերությունների պայմաններում»  
խորագրով, որին մասնակցում էին մանկավարժներ ԱՄՆ-ից,  
Լիբանանից և Սիրիայից:

2004 թ. հունիսին կազմակերպվել է կլոր սեղան՝ «Նորովի մո-  
տեցում կրթության համակարգի կառավարմանը» թեմայով, որին  
մասնակցում էին մանկավարժներ Իրանից և Հայաստանից:

2014 թ. հոկտեմբերի 17-18-ին Ծաղկաձորում կայացավ ԵՊՀ  
մանկավարժության ամբիոնի կազմակերպած «Մանկավարժո-  
ւթյան ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով տարա-  
ծաշրջանային միջազգային գիտաժողով, որը նվիրված էր ԵՊՀ  
հիմնադրման 95 և Մանկավարժության ամբիոնի 93-ամյակնե-  
րին: Գիտաժողովին մասնակցում էին գիտնական-մանկավարժ-  
ներ Հայաստանից, Իրանից և Վրաստանից: Գիտաժողովը կազ-  
մակերպվել էր ԿԳ նախարարության գիտության պետական կո-  
միտեի, ԵՊՀ-ի, Հայաստանում ԻԻՀ դեսպանատան և «Տաթև»  
գիտակրթական համալիրի ֆինանսական աջակցությամբ: Ներ-  
կա էին Հայաստանում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մո-  
համմադ Ռեիսին, Հայաստանում Վրաստանի արտակարգ և լի-  
ազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին:

Գիտաժողովի նպատակն էր համախմբել և մեկտեղել տարա-

ծաշրջանի երեք երկրների՝ Հայաստանի, Իրանի և Վրաստանի գիտնական-մանկավարժներին՝ քննարկելու մանկավարժության տարաբնույթ հիմնահարցեր, որոնք առկա են այս երկրներում և սպասում են իրենց լուծումներին: Այն նաև նշված երկրների մանկավարժների հետագա արդյունավետ համագործակցության նպաստավոր գիտական հարթակ էր:

2017 թ. հոկտեմբերին Մանկավարժության ամբիոնը կազմակերպեց «Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում» երկօրյա միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի 7 երկրի (Ավստրիա, Գերմանիա, Անգլիա, Նիդերլանդներ, Վրաստան, Ուկրաինա, Ռուսաստանի Դաշնություն) 16 գիտնական-մանկավարժներ:

2019 թ. հուլիսի 3-ին Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը կազմակերպել է «Կրթության կառավարման հիմնախնդիրները բարձրագույն կրթության համակարգում» խորագրով մեկօրյա ամառային դպրոց՝ նվիրված ԵՊՀ 100-ամյակին: Ամառային դպրոցին մասնակցում էին Ավստրիայի Գրացի համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, դոկտոր պրոֆեսոր Յոհաննա Հոպֆները, ինչպես նաև Հայաստանի տարբեր բուհերի կրթության կառավարման ոլորտի մասնագետներ և մանկավարժներ:

2018 թ. նոյեմբերին ամբիոնը 4 դասախոսների կազմով՝ պրոֆ. Ն. Հարությունյան, դոց. Ա. Գրիգորյան, դոց. Ա. Ալեքսանյան և հայցորդ Ա. Աբրահամյան, մասնակցել է ՀՀ գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին և շահել է մրցույթը: Թեման է՝ «ԵԱՏՄ անդամ երկրների՝ Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» (ժամկետը՝ 2 տարի): Հետազոտության ավարտին տպագրվել է 18 գիտական հոդված հետազոտական թիմի բոլոր անդամների կողմից: Վերոնշյալ հետազոտության արդյունքում

եղել են հետազոտական թիմի անդամների գործողումներ հետազոտությունում ընդգրկված երկրներ՝ Բելառուս, Ռուսաստանի Դաշնություն, որի արդյունքում հաստատվել են համագործակցային կապեր:

Ամբիոնը սերտորեն համագործակցում է հանրապետության բոլոր բուհերի, ինչպես նաև արտերկրի տարբեր համալսարանների մանկավարժության ամբիոնների հետ, մասնակցում նրանց կազմակերպած գիտաժողովներին:

2015 թ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կազմակերպած հանրապետական գիտաժողովին՝ «Մահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» խորագրով, ԵՊՀ մանկավարժության ամբիոնից մասնակցել են պրոֆեսոր Ն. Հարությունյանը, դոցենտներ Ա. Աշիկյանը և Ա. Ղազարյանը:

2015 թ. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի կազմակերպած հանրապետական գիտաժողովին՝ «Մանկավարժության արդի խնդիրները. մարտահրավերներ և լուծումներ» խորագրով, մասնակցել են պրոֆեսոր Ն. Հարությունյանը, դոցենտներ Ա. Աշիկյանը և Ա. Ղազարյանը:

Բավականին արդյունավետ է ամբիոնի համագործակցությունը նաև «Տաթև» գիտակրթական համալիրի հետ: Գիտահետազոտական համագործակցության արդյունքում տպագրվել են «Հայ մանկավարժական հանրագիտարանի» երեք հատորները՝ Գիրք Ա՝ «Հայ մանկավարժության նշանավոր դեմքեր», Գիրք Բ՝ «Մանկավարժական մամուլ», Գիրք Գ՝ «Մանկավարժական բանարան»:

Մանկավարժության ամբիոնն ակտիվորեն համագործակցում է Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների և դեսպանատների հետ՝ մասնակցելով նրանց կրթական ծրագրերին, կյոթ սեղաններին:



«Հայ մանկավարժական հանրագիտարանի» երեք հատորները



Կադրեր Մանկավարժության ամբիոնի՝ Ծաղկաձորում կազմակերպած  
 «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները»  
 տարածաշրջանային միջազգային գիտաժողովից, 2014 թ.



Կադրեր Մանկավարժության ամբիոնի՝ Ծաղկաձորում կազմակերպած «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովից, 2014 թ.



Կադրեր Մանկավարժության ամբիոնի՝ Ծաղկաձորում կազմակերպած «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովից, 2014 թ.



Կադրեր Մանկավարժության ամբիոնի՝ Ծաղկաձորում կազմակերպած «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովից, 2014 թ.



Կադրեր Մանկավարժության ամբիոնի 95-ամյակի հորեղյանական նիստից, 2016 թ.



Դրվագներ «Կրթության հիմնախնդիրները 21-րդ դարում» միջազգային գիտաժողովից, 2017 թ.



Դրվագ «Կրթության հիմնախնդիրները 21-րդ դարում» միջազգային գիտաժողովից, 2017 թ.



Պրոֆ. Ն. Հարությունյանը գիտաժողովի՝ Ուկրաինայի պատվիրակության անդամների հետ, 2017 թ.



«Կրթության կառավարման հիմնախնդիրները», Ամառային դպրոց, 2019 թ.

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԿՆՔԱԾ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Մանկավարժության ամբիոնը 2014 թվականից դարձել է Եվրոպական կրթական հետազոտությունների ասոցիացիայի անդամ, որի Կոնգրեսը 2022 թ. կկազմակերպվի Հայաստանում՝ ԵՊՀ-ում (կազմակերպիչը Մանկավարժության ամբիոնն է):

Մանկավարժության ամբիոնը սերտորեն համագործակցում է Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի հետ: 2016 թ. մայիսին կնքվեց միջբուհական համագործակցության պայմանագիր ՄՄՊՀ-ի և ԵՊՀ-ի միջև: Այս պայմանագրի շրջանակներում 2017 թ. ապրիլին Մանկավարժության ամբիոնից 1 հայցորդ և 1 մագիստրանտ մեծ հաջողությամբ մասնակցել են ՄՊՄՀ կազմակերպած միջբուհական ուսանողական միջազգային գիտաժողովին՝ արժանանալով «Լավագույն զեկույց» անվանակարգին:

Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանում 2018 թ. ապրիլին Մանկավարժության ամբիոնի դոցենտ Ա. Ալեքսանյանը մասնակցել է «Մանկավարժական սկիզբ» ԱՊՀ երկրների երիտասարդ դասախոսների միջազգային մրցույթին, որը կազմակերպվել էր Բուիերի եվրոպական միավորման կողմից: Նա ԱՊՀ երկրներից մասնակցող 150 մասնակցից ճանաչվել է լավագույն 5 դասախոսներից մեկը ու հաղթել «Մրցութային լավագույն նյութեր» անվանակարգում:

**Միջբուհական, միջֆակուլտետային պայմանագրեր են կնքվել նաև՝**

- Օդեսայի Կ. Դ. Ուշինսկու անվան համալսարանի հետ (Ուկրաինա, 2017 թ.):
- Լեհաստանի Ժեշովի համալսարանի հետ (2018 թ.):
- Ուկրաինայի Կիրովագրադի Լյոտնայա ակադեմիայի հետ (2018 թ.):



Համագործակցություն ԵՊՀ-ի և ՄՄՊՀ-ի միջև, 2016 թ.



ԵՊՀ-ի և ՄՄՊՀ-ի միջև կնքվում է միջբուհական համագործակցության պայմանագիր, 2016 թ.

## ԵՊՀ մանկավարժության ամբիոնի համագործակցությունը Հայաստանի բուհերի հետ



Համագործակցություն ԵՊՀ  
մանկավարժության և ԵՊՀ Իջևանի  
մասնաճյուղի ամբիոնների միջև,  
2015 թ.



Համագործակցություն ԵՊՀ-ի, ՎՄԻ-ի, ԳՊՄԻ-ի միջև, 2005 թ.

**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի մասնակցությունը  
միջազգային գիտաժողովներին և թրեյնինգներին**



ԱՄՆ, 1994 թ.



Անգլիա, 2009 թ.



Գերմանիա, 2010 թ.



Շվեյցարիա, 2011 թ.

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՀԵՏ

Սերտ է Մանկավարժության ամբիոնի համագործակցությունը սփյուռքի հայկական գաղթօջախների հետ՝ ԱՄՆ, Լիբանան, Սիրիա, Իրան: Մանկավարժության ամբիոնի ասպիրանտուրայում և «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագրում սովորում են նաև սփյուռքահայ մեր հայրենակիցները:

1992 թվականից մինչ օրս Մանկավարժության ամբիոնը հետազոտական աշխատանք է կատարում սփյուռքի հայկական դպրոցների կրթադաստիարակչական գործունեության վերաբերյալ: Մանկավարժության ամբիոնի վարիչ դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանը դասախոսություններով հանդես է եկել վերոհիշյալ գաղթօջախների հայագիտական կենտրոններում, ինչպես նաև մասնակցել է տեղի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին (գաղթօջախներում):

2017-2018 թթ. Մանկավարժության ամբիոնն ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի և Սփյուռքի նախարարության համատեղ կազմակերպած սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին դասախոսություններով և կազմակերպչական աշխատանքներով:

Մանկավարժը երկրի գիտական մտքի դարբինն է, ազգի գոյության և առաջընթացի ուղին լուսավորողը: Այս գիտակցությամբ էլ ԵՊՀ մանկավարժության ամբիոնը շարունակում է ուրույն խոսք ասել երկրի մանկավարժական, գիտակրթական ոլորտում մանկավարժական հմուտ կադրերի պատրաստման և գիտական տարբեր ծրագրերի բեղմնավոր գործելաճով:



Բեյրութ, Լիբանան, 1998 թ.



Հալեպ, Սիրիա, 1999 թ.

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ»  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ  
ՀԱՆԴԵՍԸ**

ԵՊՀ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում 2019 թվականից գործում է «Կրթությունը 21-րդ դարում» միջազգային գիտամեթոդական գրախոսվող հանդեսը, որը 2021 թ. հունվարից ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄ նախարարության ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում: Հիմնադրման գաղափարը մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանին է: Հանդեսի 3 տարվա տպագիր համարները մեծ հետաքրքրություն արթնացրին հայաստանյան և արտերկրի մանկավարժ-գիտնականների շրջանում: Տարվա մեջ երկուանգամյա պարբերականությամբ տպագրվող հանդեսն իր էջերում քննարկում է մանկավարժության և կրթության այնպիսի հիմնահարցեր, որոնք աչքի են ընկնում իրենց արդիականությամբ և բերած գիտական նորություններով: Այսօր հանդեսն իր շուրջն է համախմբել հայաստանյան և արտասահմանյան գիտնական-մանկավարժներին, վերածվել արժեքավոր հարթակի, որտեղ կշարունակվեն քննարկվել 21-րդ դարի կրթության հիմնահարցերը: Հանդեսին համագործակցում են մանկավարժ-գիտնականներ՝ եվրոպական և ԱՊՀ 8 երկրներից՝ Ավստրիայից, Գերմանիայից, Լեհաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից, Բելառուսից, Վրաստանից, Ղրղզստանից: Հանդեսի խմբագրական խորհրդի կազմում են

գիտնական-մանկավարժներ ինչպես Հայաստանից, այնպես էլ ՌԴ-ից, Վրաստանից, Ուկրաինայից, Ավստրիայից, Լեհաստանից: Հանդեսում հոդվածները տպագրվում են անվճար, քանի որ այն տպագրվում է ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Արմեն և Սալբի Մուսիկյանների մեկենասությամբ:

ISSN 2579-2792

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ЦЕНТР ПЕДАГОГИКИ И РАЗВИТИЯ ОБРАЗОВАНИЯ  
CENTER OF PEDAGOGY AND EDUCATION DEVELOPMENT



1

2019

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ  
ОБРАЗОВАНИЕ В 21-ОМ ВЕКЕ  
EDUCATION IN THE 21<sup>ST</sup> CENTURY

ISSN 2579-2792

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ЦЕНТР ПЕДАГОГИКИ И РАЗВИТИЯ ОБРАЗОВАНИЯ  
CENTER OF PEDAGOGY AND EDUCATION DEVELOPMENT



2

2019

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ  
ОБРАЗОВАНИЕ В 21-ОМ ВЕКЕ  
EDUCATION IN THE 21<sup>ST</sup> CENTURY

ISSN 2579-2792

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ЦЕНТР ПЕДАГОГИКИ И РАЗВИТИЯ ОБРАЗОВАНИЯ  
CENTER OF PEDAGOGY AND EDUCATION DEVELOPMENT



1

2020

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ  
ОБРАЗОВАНИЕ В 21-ОМ ВЕКЕ  
EDUCATION IN THE 21<sup>ST</sup> CENTURY

ISSN 2579-2792

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ЦЕНТР ПЕДАГОГИКИ И РАЗВИТИЯ ОБРАЗОВАНИЯ  
CENTER OF PEDAGOGY AND EDUCATION DEVELOPMENT



2

2020

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ  
ОБРАЗОВАНИЕ В 21-ОМ ВЕКЕ  
EDUCATION IN THE 21<sup>ST</sup> CENTURY



«Կրթությունը 21-րդ դարում» միջազգային գիտամեթոդական հանդեսում հոդվածները տպագրվում են երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

# ԵՊՀ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ՈՒԽ-ն գործում է 2017 թվականից: Ուսանողական կառույցն իր շուրջն է համախմբել կենտրոնում գործող և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի կրթական ծրագրերում սովորող ուսանողներին: Կենտրոնի ՈՒԽ-ն նպատակ ունի ծանոթացնելու

և իրազեկելու ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, պաշտպանելու ուսանողների շահերը: ՈՒԽ-ին հնարավորություն է ընձեռված մասնակցելու ՄԿԶԿ-ում գործող գիտական խորհրդի նիստերին, բարձրաձայնելու և քննարկման ներկայացնելու ուսանողությանն առնչվող հարցեր, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման և արդյունավետության բարձրացման առաջարկություններ անելու:

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ՈՒԽ-ն ուսանողների համար պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ, որոնց արդյունքում խթանվում է ուսանողների գիտակրթական, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացումը:

ՄԿԶԿ ՈՒԽ գործունեության կարևորագույն մասն է կազմում նաև սոցիալապես անապահով ուսանողներին համապատասխան աջակցության տրամադրման գործընթացի կազմակեր-

պումը:

ՄԿԶԿ ուսխորհրդի նախագահությունն ունի մշտական հանձնաժողովներ՝ մշակույթի, սպորտի, լրատվության և հասարակայնության հետ կապերի, արտաքին կապերի, իրավական, գիտակրթական, ֆինանսատնտեսական, սոցիալական: ՈՒԽ աշխատանքներին կարող է մասնակցել ՄԿԶԿ-ում սովորող յուրաքանչյուր ուսանող: Այդ մասնակցությունը կարող է լինել տարբեր և կախված է ուսանողի կողմից իրականացվող գործառնություններից:

Ուսանողը կարող է ընտրվել և մասնակցել Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի կամ համալսարանի ուսանողական խորհրդի կողմից կատարվող աշխատանքներին, ինչպես նաև հանձնաժողովների կողմից իրականացվող ծրագրերին: ՄԿԶԿ ՈՒԽ-ից ԵՊՀ ՈՒԽ պատվիրակներ և անդամներ կարող են ընտրվել այն ուսանողները, որոնք ստանում են կուրսի մեծամասնության ձայները, և որոնց միջին որակական գնահատականը (ՄՈԳ) վերջին երկու կիսամյակում 13 է և դրանից բարձր:

Իր գործունեության չորս տարիների ընթացքում ՄԿԶԿ ՈՒԽ-ն կազմակերպել է տարբեր միջոցառումներ, որոնցից են՝ «Մանկավարժները հիշում են և պահանջում», «Կոմիտասի առաքելությունը», ամանորյա տոնակատարությունները: Իր նշանակությամբ առանձնահատուկ է հատկապես ամեն տարի հոկտեմբերի 2-ին տեղի ունեցող Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառումը՝ «Ես սոցիալական մանկավարժ եմ» խորագրով, որի ընթացքում տեղի է ունենում առաջինկուրսեցիների երդման արարողությունը: Մեծ հետաքրքրություն առաջացնող այս մասնագիտական տոնը միջազգային մասշտաբներով նշվում է մի շարք երկրներում: Սոցիալական մանկավարժների միջազգային ասոցիացիայի նախագահ Բեննի Անդերսենի կողմից 2010 թ. հոկտեմբերի 2-ը հայտարարվեց Սոցիալական մանկավարժի միջազգային օր: Միջոցառման նպատակն է «Սոցիալական

մանկավարժություն» կրթական ծրագրի ուսանողների շրջանում սեր և հետաքրքրություն առաջացնել իրենց մասնագիտության հանդեպ: Ինչպես նշում է մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանը, «սոցիալական մանկավարժի գործունեությունը ոչ թե սոսկ պարտականություն է, այլ առաքելություն, և ամենամեծ որակը, որ պետք է դրսևորի սոցիալական մանկավարժը, սերն է երեխաների և մարդկանց հանդեպ»: ՄԿԶԿ «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի չորրորդ կուրսեցիների կողմից առաջին կուրսեցիներին են շնորհվում ժապավեններ և կրծքանշաններ՝ որպես ապագա սոցիալական մանկավարժների բարձր ու պատասխանատու առաքելության խորհրդանիշներ:

Մերօրյա արցախյան պատերազմական իրադարձություններին ևս արձագանքեցին ՄԿԶԿ ՈՒԽ ուսանողները՝ թե՛ պատերազմի ընթացքում, թե՛ դրանից հետո՝ կամավորական գործունեություն ծավալելով, այցելելով պատերազմից տուժած զինվորներին, օժանդակելով պատերազմից տուժած իրենց ուսանող ընկերներին:

2020-2021 թթ. համավարակի պայմաններում առցանց կերպով իրականացրած միջոցառումների բազմազանությունը արտացոլվել է ՄԿԶԿ ՈՒԽ ֆեյսբուքյան էջում և կազմակերպվել «Zoom» հարթակի օգնությամբ: Գրեթե մեկ տարի, ամեն ամիս առցանց հանդիպումներ են կազմակերպվել անձնական աճի, մասնագիտական հմտությունների զարգացման և ուսանողներին հետաքրքրող այլ հարցերի ուղղությամբ: Առցանց տիրույթից դուրս նրանք կազմակերպել են նաև այցեր մանկատուն, ծերանոց՝ իրականացնելով սոցիալ-դաստիարակչական խորհրդատվություն, նաև կամավորական աշխատանքներ:

Ուսանողական խորհրդի աշխատանքային ծրագիրը միշտ հազեցած է տարաբնույթ միջոցառումներով, որոնք իրենց նշանակալի ազդեցությունն են ունենում ուսանողների ընդհանուր զարգացվածության, աշխարհայացքի ընդլայնման և ուսումնական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման

տեսանկյունից:

Կենտրոնում գործող ՈԻԽ ակտիվ աշխատանքներն ու նախաձեռնողականությունը միշտ խրախուսվում են ՄԿՁԿ ղեկավարության կողմից. նրանց աջակցությամբ ցանկացած գաղափար ուսանողները կարողանում են կյանքի կոչել թե՛ առդեն, թե՛ առցանց պայմաններում:



ՈԻԽ-ի աշխատանքային առօրյան, 2018 թ.



ՈՒԽ-ի կազմակերպած միջոցառումները

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողական գիտական ընկերությունն ակտիվ կառույց է, որն իր շուրջն է համախմբել հետազոտելու, պրպտելու ցանկություն ունեցող, կազմակերպչական ձիրք ունեցող ուսանողներին:

Կառույցի ակտիվ գործունեությունն ապահովում են նրա շուրջը համախմբված կենտրոնի տարբեր կրթական ծրագրերի ուսանողները: ՈՒԳԸ աշխատանքը բաժանված է տարբեր ուղղությունների՝ տեղեկատվական, կազմակերպչական, գիտահետազոտական և ժամանցային, որոնց իրականացման համար ուսանողներից տարբեր խմբեր են ձևավորվել և հաշվետվողական համակարգով համագործակցում են իրար հետ: Շատ կարևոր նշանակություն ունի ՈՒԳԸ կառույցի համար ուսանողական գիտական ներուժի կազմակերպման հարցը: Գիտական հոգվածների որակական կողմը զարգացնելու նկատառումով ուսանողին դեռևս ուսանողական նստարանից խորհրդատվական աջակցություն ցույց տալու համար ՄԿԶԿ տնօրեն պրոֆ. Ն. Կ. Հարությունյանի նախաձեռնությամբ պրոֆեսորադասախոսական անձնակազմից ձևավորվել է հանձնաժողով, որը կազմակերպում է խորհրդատվություն, քննարկում է գիտական նստաշրջաններին ելույթ-գեկուցումով մասնակից ուսանողների աշխատանքների որակը, գրախոսում և երաշխավորում նրանց հոգվածները ԵՊՀ ՈՒԳԸ գիտական տեղեկագրում տպագրության համար:

Մանկավարժության ամբիոնի՝ իր ակտիվությամբ աչքի ընկած ՈՒԳԸ-ն, 2017 թվականից սկսած, իր ինքնուրույն նախաձեռնողականությամբ է հանդես գալիս իբրև Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ակտիվ ուսանողական կառույց, որի կազմակերպած գիտական նստաշրջանները չեն սահմանափակվում բուհի շրջանակներով: 2019 թ. հոկտեմբերի 3-4-ին Մանկավարժության և կրթության զարգացման կենտրո-

նի ՈԻԳԸ-ի կազմակերպած ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջազգային ուսանողական գիտական նստաշրջանին մասնակցել են ուսանողներ ոչ միայն ԵՊՀ-ից, Հայաստանի տարբեր բուհերից, այլև Ռուսաստանի Դաշնության 2 բուհերից (4 մասնակից):

Կենտրոնի ուսանողներն ակտիվորեն համագործակցում են հայաստանյան այլ բուհերի ՈԻԳԸ-ների հետ՝ մասնակցելով միջբուհական ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքներին և արժանանալով տարբեր մրցանակների:

ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողները ակտիվորեն մասնակցում են համալսարանական մշակութային կյանքին, ուսանողական փառատոներին, «Ուրախների ու հնարամիտների ակումբի» միջոցառումներին, կամավորական աշխատանքներին:

2017 թվականից Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողները մասնակցում են կենտրոնի գիտախորհրդի աշխատանքներին՝ դրանով իրենց մասնակցությունն ունենալով կառավարման գործընթացին: Այսօր առցանց ուսուցման պայմաններում ՄԿԶԿ ՈԻԳԸ-ն ակտիվացրել է ֆեյսբուքյան հարթակը և համախմբել կրթական տարբեր ծրագրերով սովո-



ՈԻԳԸ միջազգային գիտաժողովի մասնակիցները դասախոսների հետ, 2019 թ.

րողներին իր առանցքի շուրջ: 2019/2020/2021 ուստարիների աշխատանքները պլանավորելիս կենտրոնի ՈԻԳԸ-ն հետևողականորեն զարգացնում է բակալավրիատի «Սոցիալական մանկավարժություն», ինչպես նաև մագիստրատուրայի «Կրթության կազմակերպում» և «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի ուսանողների հանդիպումները միասնական առցանց հարթակում, պարբերաբար կազմակերպում է հետազոտական նախագծերի քննարկումներ:

Թեև թագավարակի պայմաններում նախատեսված որոշ միջոցառումներ փոխադրվեցին առցանց տիրույթ, սակայն ուսանողական ակտիվ կյանքի զարկերակը մոտեցնելով փոփոխվող աշխարհի պահանջկոտ տրամաբանությանը՝ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ջանքերով ուսանողներն այսօր էլ շարունակում են գտնել նորանոր ձևաչափեր միմյանց հետ հաղորդակցվելու, մասնագիտական խորհրդատվություն ստանալու, զարգացման կրկնապատկված տեմպին համահունչ արարելու և ստեղծագործելու ուղիներ:



ՈԻԳԸ միջազգային գիտաժողովի արտասահմանցի մասնակիցները, 2019 թ.



Կադրեր ՈՒԳԸ տարբեր տարիների գիտաժողովներից, 2015 թ., 2016 թ.



### Սոցիալական մանկավարժի միջազգային օրը

Տիրում է սերտ համագործակցություն Մանկավարժության ամբիոնի դասախոսակազմի և ուսանողների միջև, որը դրսևորվում է տարբեր միջոցառումների և հանդիպումների ձևով: Այդպիսի միջոցառումների թվին կարելի է դասել յուրաքանչյուր տարի հոկտեմբերի 2-ին տեղի ունեցող Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառումը՝ «Ես սոցիալական մանկավարժ եմ» խորագրով, որի ընթացքում տեղի է ունենում առաջինկուրսեցիների երդման արարողությունը:

Մեծ հետաքրքրություն առաջացնող այս տոնը նշվում է մի շարք երկրներում:

Միջոցառման նպատակն է «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի ուսանողների շրջանում սեր և հետաքրքրություն առաջացնել իրենց մասնագիտության հանդեպ:

«Պատահական չէ, որ տարբեր երկրներում հոկտեմբերի 2-ը մեծ շուքով նշվում է որպես Սոցիալական մանկավարժի օր: Այս օրը, ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսները մեծ խանդավառությամբ են լցվում և այն վերածում հանդիսավոր մի տոնի: Ես համոզված եմ, որ այս տոնի նշումն օգնելու է ուսանողներին առավել լավ հասկանալ մասնագիտության կարևորությունն

ու էությունը»,– նշում է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ Նազիկ Հարությունյանը:

Միջոցառման ընթացքում ուսանողները մանրամասն ներկայացնում են սոցիալական մանկավարժության զարգացման պատմությունը՝ առանձնացնելով այն երախտավորներին ու նրանց աշխատությունները, որոնց միջոցով մասնագիտությունը տասնամյակների ընթացքում կատարելագործվել և դարձել է մանկավարժության ինքնուրույն գիտաճյուղ:

Բարի ավանդույթի վերածվող այս միջոցառման ընթացքում տեղի է ունենում նաև առաջինկուրսեցիների մասնագիտական երդման հանդիսավոր արարողությունը, որին հաջորդում է չորրորդ կուրսի ուսանողների կողմից խորհրդանշական վզկապների ու կրծքանշանների հանձնումը:

Ապագա սոցիալական մանկավարժները երդվում են հավատարիմ լինել իրենց մասնագիտությանը, օգնել, աջակցել, կրթել ու դաստիարակել երեխաներին տարբեր խնդիրների լուծման գործում: Նրանք իրենց պարտքն են համարում հիշատակել, որ ընտրել են այնպիսի մի մասնագիտություն, որի նպատակն է երեխաների և երիտասարդների շրջանում դաստիարակել սեր, համախմբվածություն և պատրաստակամություն:

### **Առաջինկուրսեցիների երդման խոսքը**

Ընտրելով սոցիալական մանկավարժի բարձր ու պատվավոր, հումանիստական ու պատասխանատու մասնագիտությունը՝ երդվում եմ՝

*լինել*

- երեխայասեր,
- բարի, արդար ու ազնիվ,
- օգնող ու աջակցող,
- գթասիրտ,
- համբերատար,

- հաղորդակցվող,
- սկզբունքային,
- երեխաների շահերի պաշտպան,
- բարոյական և հոգևոր բարձր արժեքների տեր,
- կրթող ու դաստիարակող,

#### ***ունենալ***

- պատասխանատվության բարձր զգացում,
- ինքնատիրապետման և ինքնակառավարման կարողություն,
- հաղորդակցական և կազմակերպչական հմտություններ,

#### ***դրսևորել***

- էմոցիոնալ կայունություն,
- հանդուրժողականություն,
- մանկավարժական տակտ,
- մանկավարժական ինտուիցիա,
- մանկավարժական վարպետություն, մանկավարժական ապրումակցում:

#### ***Երդվում եմ:***

Միջոցառմանն ամեն տարի ներկա են լինում Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ղեկավարությունը, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, տարբեր դպրոցների մանկավարժներ, տնօրեններ, ավագ դպրոցների աշակերտներ, ինչպես նաև հյուրեր արտասահմանից, մասնավորապես 2018 թ. հոկտեմբերի 2-ի միջոցառմանը ներկա էին հյուրեր Լիբանանից:



Դրվագներ տարբեր տարիների Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառումներից



Դրվագներ տարբեր տարիների Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառումներից



Դրվագներ տարբեր տարիների Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառումներից

## «ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ ՀԻՇՈՒՄ ԵՆ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ»



Մանկավարժության ամբիոնի դասախոսները սոցիալական մանկավարժների և «Կրթության կազմակերպում» կրթական ծրագրի մագիստրանտների հետ Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցին նվիրված միջոցառմանն իրենց ձայնը հնչեցրին՝ կազմակերպելով «Մանկավարժները հիշում են և պահանջում» խորագրով բողոքի և ոգեկոչման միջոցառումը:

Առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց Հայոց ցեղասպանության ընթացքում սպանված հայ մանկավարժների մասին տեղեկատվությունը: Այդ տեղեկությունների հայթայթման և հրապարակման նախաձեռնողը ԵՊՀ մանկավարժության ամբիոնն էր: Զոհված մանկավարժների անունները հրապարակվեցին ամբիոնի կազմակերպած «Մանկավարժները հիշում են և պահանջում» միջոցառման շրջանակում:

«Մեր նպատակը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատա-

կը ոգեկոչելն էր, բայց եկել է ոչ միայն ոգեկոչելու, այլև ո՛չ ասելու բռնությանը, մարդկային անտարբերությանն ու լռությանը: Երբ 1915 թ. 1.5 մլն հայ կոտորվեց, նրանց մեջ հազարավոր մանկավարժներ կային, և նրանց վերաբերյալ տեղեկատվություն առ այսօր չկար: Ինչպե՞ս կարող էինք մենք դրա կողքով անտարբեր անցնել», – նկատեց Մանկավարժության ամբիոնի վարիչ Նազիկ Հարությունյանը:

Մանկավարժների մասին տեղեկություններն ու նրանց լուսանկարները Հայաստանի ազգային արխիվից հայթայթել են ամբիոնի երիտասարդ դասախոսները: Արխիվային փաստաթղթերից հաջողվել էր առանձնացնել տեղեկություններ շուրջ 60 մանկավարժի մասին, սակայն միջոցառման ընթացքում ցուցադրվեցին 22-ի լուսանկարները, քանի որ մյուսների լուսանկարները հնամաշության պատճառով ցուցադրման ենթակա չէին: Նրանք են՝ Արամ Վարժապետ, Մարգարիտ Նալբանդյան, Միհրան Իսախիյան, Պետրոս Պենսե, Պողոս Զեննեյան, Եսթեր Ոսկերիչյան, Ռուբեն Տեր-Հեքիմյան, Արտաշես Տեր-Ստեփանյան, Հակոբ Աղասեր, Սմբատ Բյուրատ, Գագիկ Օզանյան, Գաբրիել Անսուրյան և ուրիշներ...: Նրանց անունները մեկառմեկ հնչեցրին միջոցառման մասնակից ուսանողները:

Միջոցառման ընթացքում հնչեցին ասմունք, երգ, որոնց միջոցով բարձրաձայնվեց 1915 թ. հայոց ցեղասպանության ողջ եղելությունը:

Ցեղասպանության ընթացքում զոհված մանկավարժներին ներկայացնելուց բացի՝ ցուցադրվեցին նաև արխիվային այլ կադրեր, ջարդերի ու տեղահանման մասին պատմող փոքրիկ տեսաֆիլմ, ինչպես նաև լուսանկարներ, որոնցում պատկերված էին Արևմտյան Հայաստանի քաղաքները:

Թեև միջոցառման ընթացքում խոսվում էր Հայոց ցեղասպանության, կորցրած հայրենիքի ու կորսված ճակատագրերի մասին, ավարտը, սակայն, բոլորովին էլ այդ ոգով չէր: Որպես այդ ամենի եզրափակում՝ միջոցառման կազմակերպիչները տեսնում

էին մերօրյա պահանջատիրությունն ու պայքարը:

Միջոցառման ավարտին մասնակից ուսանողները մասնաշենքի բակում սպիտակ աղավախներ բաց թողեցին երկինք՝ ի նշան խաղաղության:

ԵՊՀ մանկավարժության ամբիոնն ունի մեծ առաքելություն, այն է՝ նպաստել Հայաստանի գիտակրթական ոլորտի զարգացմանը: Եվ մենք հավատարիմ ենք այդ մեծ առաքելությանը մեծ վճռականությամբ, խոր համոզմունքով և նպատակասլացությամբ, բայց միևնույն ժամանակ մեծ լավատեսությամբ՝ մեր երկրի ապագա սերնդի վաղվա արևոտ օրվա նկատմամբ:



Մանկավարժության ամբիոնի վարիչ Ն. Հարությունյանը միջոցառմանը, 2015 թ.



Դրվագներ միջոցառումից, 2015 թ.



Դրվագներ միջոցառումից, 2015 թ.

# ԵՊՀ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ, ՀԱՅՅՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԵՐԸ



## **Արևիկ Ղազարյան** **ԵՊՀ մանկավարժության ամբիոնի** **դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու**

Մարդու կյանքում վառ անհատականությունների հետ հանդիպումը կարող է լինել շրջադարձային: Այդպիսին էր իմ՝ կենսաբանության ֆակուլտետի ուսանողուհու հանդիպումը մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանի հետ: Դրան հաջորդեցին մասնագիտական ձևավորման, կայացման, ինքնաիրացման տարիները՝ ուսանողից, ասպիրանտից մինչև գիտությունների թեկնածու, դոցենտ: Խորին հարգանքով, ակնածանքով և նվիրումով շնորհակալ եմ Ձեզ, ուսուցիչ, ոչ միայն անցած 20 տարիների համար, այլև յուրաքանչյուր օրվա, երբ չենք դադարում Ձեզանից՝ նորարար դեկավարից, գիտնականից և մասնագետից սովորել: Անցած տարիները բեկումնային են եղել նաև Մանկավարժության ամբիոնի վարկանիշի բարձրացման համար՝ սպասարկող ամբիոնից վերածվելով թողարկող ամբիոնի, գիտական ձեռքբերումների, մանկավարժության նոր գիտաճյուղերի զարգացման, ամբիոնում առողջ բարոյափոխության և մթնոլորտի և սերնդավորության տեսանկյունից: Առաքելությանն ու կոչմանը համապատասխան՝ մեր ամբիոնի անցած 100 տարիները խորհրդանշական են: Ցանկանում եմ, որ առաջիկա տարիները նույնպես լինեն բեղմնավոր, լեցուն և նպատակային:



**Արա Սաղաթելյան**  
**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի**  
**դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու**

Հայարտությամբ պիտի արձանագրեն, որ եղել եմ ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հայցորդ: Իմ գիտամանկավարժական նկրտումների սկիզբը դրվել է այս ամբիոնում: Ունեցել եմ Նազիկ Հարությունյան գիտնականի նման գիտական ղեկավար, որն իր գիտելիքների անսպառ ամբարը բացեց իմ առաջ և մարդկային բարձր որակներով, մասնագիտական աջակցությամբ ու խորհրդատվությամբ ճանապարհ հարթեց դեպի գիտություն: Այսօր մանկավարժ-մասնագետի իմ կայացման գործում պարտական եմ գիտական ղեկավարիս, Մանկավարժության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին, դասախոսներին, որոնք աջակցել, ուղղորդել և բարի խորհուրդներով ուղեկցել են ինձ այս տարիների ընթացքում: Շնորհակալ եմ բոլորին իմ կայացման և ամբիոնի զարգացման գործում ունեցած մեծ ներդրումների համար:



## **Արմենուհի Աշիկյան ԵՊՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու**

Յուրաքանչյուր մարդու կյանքում բախտորոշ է նրա աշխատանքային մկրտությունը, թե ինչ միջավայրում է ծավալվում նրա գործունեությունը: Ընտրելով մանկավարժի բարդ, սակայն աստվածապարզ մասնագիտությունը՝ ավելի քան 2 տասնամյակ առաջ հանգամանքների բարեհաճությամբ դարձա Մայր բուհի բազմավաստակ ամբիոնի անդամ, ամբիոն, որը ղեկավարում էր մանկավարժության բնագավառի ճանաչված և մեծ հեղինակություն վայելող, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանը: Վերջինիս նրբանկատ, հմուտ ղեկավարությամբ ոչ միայն ինձ զգացի որպես ամբիոնի լիարժեք անդամ, այլև ստեղծված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի, հոգատարության շնորհիվ գրանցեցի մասնագիտական առաջընթաց:

Ներկայումս ամբիոնի դոցենտ եմ:

Երախտագիտության խոսքս ուղղում եմ ամբիոնի բոլոր անդամներին, մասնավորապես գիտական ղեկավարիս՝ ամբիոնի վարիչ Նազիկ Հարությունյանին, որի ջերմ հոգատարության, բարյացակամ խստապահանջության, գիտական բարձր կարողությունների և մասնագիտությանն ու ամբիոնին անմնացորդ, երբեմն ինքնամոռացության աստիճանի հասնող նվիրվածության շնորհիվ այսօր Մանկավարժության ամբիոնը դարձել է ինչպես ԵՊՀ առաջատար, այնպես էլ հանրապետության ճանաչված գիտական օղակներից մեկը:



**Ռուզաննա Մարդոյան  
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան  
պետական համալսարանի  
մանկավարժության ֆակուլտետի  
ղեկան, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ.**

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում ԵՊՀ մանկավարժության ամբիոնին իր 100-ամյա իմաստավոր ճանապարհի համար:

Մերոնդներ կրթելու առաքելության մեջ վիթխարի է Մանկավարժության ամբիոնի գիտական ներուժը: Ամբիոնն ունի կայուն վարկանիշ, բարձր որակավորում ունեցող մասնագետներ, հարուստ ավանդույթներ և ապագայի մարտահրավերներ ընդունելու մեծ փորձառություն: Այսօր նրա մեծագույն նվաճումն այն մասնագետներն են, որոնք ՀՀ և արտերկրի տարբեր բուհերում և գիտակրթական օջախներում իրականացնում են արհեստավարժ գործունեություն՝ ի բարօրություն մեր ժողովրդի: Նրանց թվում եմ նաև ես. եղել եմ Մանկավարժության ամբիոնի դոկտորանտ և իմ գիտական մկրտությունն եմ ստացել այստեղ՝ արժանանալով մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի:

Տարիների հեռվից սիրով ու երկյուղածությամբ մեր խոնարհումն ենք բերում Մայր բուհի Մանկավարժության ամբիոնին:

Աստված օգնական Ձեզ հետայսու ձեր բոլոր արարումներում:



**Լուսիկ Ղուկասյան  
Շիրակի Մ. Նալբանդյանի անվ.  
պետական համալսարանի մանկ.  
ամբիոնի վարիչ, մանկ. գիտ.  
թեկնածու, դոցենտ**

Սիրելի ԵՊՀ մանկավարժության ամբիոն, շնորհավորում եմ մեկդարյա հոբելյանի առիթով: Դուք պատվիրանապահն եք առաքինի գիտելիքի և ապահովում եք սերունդների մտքի և հոգու թռիչքը: Ձեր մանկավարժական գործունեության հիմքում ընկած է այս անբեկանելի հավատամքը: Այս հավատամքի ներքո եմ ես Մանկավարժության ամբիոնում իրականացրել իմ գիտահետազոտական գործունեությունը որպես հայցորդ, որի փայլուն արդյունքը եղավ իմ թեկնածուականատենախոսության պաշտպանությունը:

Մայր բուհը մտքի կաճառ է, որտեղ ինքնահաստատվել են բազմաթիվ սերունդներ, և որի գիտակրթական մթնոլորտը շարունակաբար ապահովվում է նորօրյա գիտության նվաճումներով:

Երևանի պետական համալսարանի մանկավարժ-գիտնականներ, դուք ձեր կոչումով արդեն իսկ զինվորյալ եք և մշտապես բոլոր հարցերում հաստատում եք ձեր առաքելությունը:

Ես վստահ եմ, որ ԵՊՀ մանկավարժության ամբիոնը՝ իբրև կրթության բարի ու անխոնջ մշակ, միշտ համաքայլ է լինելու ժամանակի ոգուն, ավելացնելու ու միշտ վառ է պահելու Լուսավորչի կանթեղի լույսը:



**Լյուդմիլա Դանիելյան  
Վանաձորի Հովհ. Թումանյանի  
անվ. պետական համալսարանի  
մանկավարժության ամբիոնի  
ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու**

Յուրաքանչյուր մտավորականի համար, ուսումնառության ու աշխատանքային որ շրջանում էլ լինի՝ ուսանողական, ասպիրանտական, դասախոսական, մեծ պատիվ է առնչությունը Երևանի պետական համալսարանի հետ: Ես այդ բախտին արժանացա բավականին ուշ, երբ ունեի մասնագիտություն՝ բանասերի, աշխատանք՝ դասախոսի, սակայն չունեի իրավական այն փաստաթուղթը, որ կոչվում է գիտական աստիճան: Եվ ահա այդ թերին ես լրացրի Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում: Ես այն բախտավոր մտավորականներից եմ, որը թրծվել է մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանի ղեկավարած գիտական օջախի մթնոլորտում ու նրա օբյեկտիվ պահանջկոտությամբ պաշտպանել գիտական թեզ՝ «Հարություն Ալամդարյանը՝ մանկավարժ»:

Շնորհակալ եմ և՛ Մայր բուհին, և՛ Մանկավարժության ամբիոնին, հատկապես ամբիոնի վարիչ Նազիկ Հարությունյանին՝ իմ կյանքի ուղին լուսավորելու, իմ գործունեությունը գիտական ռելսերի վրա դնելու ու մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին արժանացնելու համար:

Շնորհավորում եմ Մանկավարժության ամբիոնի ողջ անձնակազմին հոբելյանի առթիվ, գլուխ խոնարհում ամբիոնի երախտավորների առջև ու ցանկանում, որ ամբիոնը գոյատևի բազում դարեր, կյանքի կոչի նոր գիտական ձեռքբերումներ և մնա Մայր բուհի առաջատար ամբիոններից մեկը:



**Մերի Ավետիսյան**  
**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի**  
**դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու**

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում գործող Մանկավարժության ամբիոնում իմ աշխատանքային գործունեության ողջ ընթացքը վերածվել է ստեղծագործական ներուժի բացահայտման, մանկավարժական վարպետության շարունակական ձեռքբերումների և նոր ու ժամանակակից մոտեցումներով դասախոսական գործունեությունս հարստացնելու մի լուսավոր ընթացքի: Իմ մասնագիտական կայացման ճանապարհն ամբիոնում անցել եմ նախ որպես հայցորդ, այժմ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ եմ: Անմոռանալի էին ինձ համար թեկնածուական ատենախոսություն գրելու տարիները: Իմ թեկնածուական ատենախոսության ղեկավարն է եղել պրոֆեսոր Նազիկ Հարությունյանը, որի շնորհիվ էլ ձեռք եմ բերել համապատասխան կայուն գիտելիքներ: 2014 թ. ստացել եմ մանկ. գիտ. թեկնածուի գիտական աստիճան, այնուհետև՝ 2021 թ.՝ դոցենտի կոչում: Ես շատ շնորհակալ եմ, որ իմ ուսումնառության և գիտամանկավարժական գործունեության ճանապարհներն անցնում եմ այնպիսի բարձրակարգ հեղինակության կողքին, ինչպիսին է Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանը՝ մեր ժամանակների մեծ գիտնականն ու ուսուցիչը: Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնը մեծ դերակատարություն է ունեցել իմ կյանքում: Այդ առիթով մեծ երախտագիտությամբ կցանկանայի մաղթել իմ սիրելի ամբիոնին երկար տարիների արդյունավետ մանկավարժական և գետահետազոտական գործունեություն:



**Լուսինե Հայրապետյան**  
**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի**  
**դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու**

ԵՊՀ մանկավարժության ամբիոնը համալսարանի հենասյուներից է: Նրա ակունքներում է պահվում և սերունդներին փոխանցվում մեր երկրի մանկավարժական մտքի լույսը:

Սիրով կցանկանայի փաստել, որ ԵՊՀ մանկավարժության ամբիոնն իր ուրույն տեղն ու դերն ունի իմ մասնագիտական աճի, ձեռքբերումների մեջ: Որպես «Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագրի շրջանավարտ՝ ցանկանում եմ երախտագիտությունս հայտնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, բոլոր դասախոսներին, որոնք նպաստել և այսօր էլ նպաստում են շրջանավարտների գիտելիքների կայուն համալրմանը:

Հայտնի է, որ յուրաքանչյուր երկրի ապագան կախված է երիտասարդ սերնդի ձեռքբերումներից ու հաջողություններից: ԵՊՀ մանկավարժության ամբիոնը բարձր պատասխանատվությամբ է ստանձնել այդ գործը՝ տարիներ շարունակ տեսագործական գիտելիքներով զինված շրջանավարտներ թողարկելով:

Մեծ հպարտությամբ պետք է նշեմ, որ ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հետ են կապված նաև իմ գիտամանկավարժական գործունեության առաջին քայլերը՝ նախ որպես հայցորդի, թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո՝ որպես մանկավարժական գիտությունների թեկնածուի, ասիստենտի, այնուհետև՝ դոցենտի: Այս պատվաշնորհ առիթով երախտագիտության առանձնահատուկ խոսք եմ ուզում հղել ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ, վաստակավոր մանկավարժ ու գիտնական, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն. Կ. Հարությունյանին՝ իմ գիտական ղեկավարին, որը եղել և մնում է

ինձ համար որպես մանկավարժ-գիտնականի իղեայ, օրինակ ու ոգեշնչող ներկայություն, որի հոգածու ձեռքի տակ տարիներ շարունակ կերտվել ու կերտվում են սոցիալական մանկավարժներ, կրթության գործի կազմակերպիչներ, ինչպես նաև՝ երիտասարդ գիտնականներ:

Պրոֆ. Ն. Կ. Հարությունյանի հավատն ու վստահությունը, պահանջկոտությունն ու աջակցությունը երիտասարդ գիտնականների հանդեպ մասնագիտական աճի յուրահատուկ շարժառիթ են ամբիոնում դասավանդող յուրաքանչյուր դասախոսի համար: Շնորհակալությամբ պետք է փաստեն, որ ինձ համար բացառիկ պատիվ է սիրելի պրոֆեսորի՝ Ն. Կ. Հարությունյանի ցույց տված շավղով քայլելը, քանի որ նրա պատգամով մեզանից յուրաքանչյուրի քայլը մանկավարժություն գիտության ասպարեզում ծնվում է գիտական լուրջ ուսումնասիրության, համոզվածության, ապա՝ նաև խոր հավատի և սիրո արդյունքում: Նման մոտեցումը գործին բերում է ապագայի նոր տեսլականներ, որոնք ամբիոնը կյանքի են կոչում՝ հանուն մեր երկրում մանկավարժություն գիտության զարգացման:

ԵԴՀ մանկավարժության ամբիոնի իրականացրած յուրաքանչյուր ծրագիր ու գործ հենվում է ավանդույթների, դրանք շարունակելու, զարգացնելու և նորովի հարստացնելու հիմքերի վրա, ուղղված է հայրենի երկրի գիտական ներուժի զարգացմանը, աշխատաշուկայում մրցունակ և գիտելիքներով զինված շրջանավարտներ թողարկելուն, ժամանակի պահանջներին համընթաց՝ նոր նախաձեռնություններով հանդես գալուն, հետևաբար նաև ամբիոնի զարգացմանն ու բարգավաճմանը, հեռանկարային նոր չափանիշներ սահմանելուն:

Ես սիրով և հպարտությամբ եմ շնորհավորում ԵԴՀ մանկավարժության ամբիոնի 100-ամյա հոբելյանը՝ իր ազգաշահ գործունեությանը մաղթելով հարատև ընթացք ու երկար տարիների արգասաբեր գործունեություն:



## **Ռուզաննա Իսկանդարյան ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ղասախոս**

1995 թ. ավարտելով ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետը՝ նախընտրեցի հետագա կրթությունս շարունակել Մանկավարժության ամբիոնի ասպիրանտուրայում: Ընտրությունը պայմանավորված էր ն՝ մասնագիտությանը մանկավարժության սերտ առնչությամբ, ն՝ հետաքրքրությունների շրջանակով, ն՝ այն միջավայրով, որտեղ պիտի աշխատեի: Այս ամբիոնում են արվել իմ՝ որպես մասնագետի ձևավորման առաջին քայլերը:



**Աննա Հովակիմյան**  
**«ՄՈՍ» մանկական գյուղեր»**  
**հայկական բարեգործական**  
**հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի**  
**տնօրեն**

Իմ սիրելի՛ դասախոսներ, հարգելի՛ տիկին Ն. Հարությունյան, այսօր այն օրն է, որ պետք է երախտագիտության խոսքեր ուղղեմ Ձեր մեծ նվիրումի և նրա համար, որ Ձեր մանկավարժական մեծ վարպետությունը, դասավանդման կատարելությունը, ուսանողների նկատմամբ անսահման սերը փոխանցել էք մեզ: Ձեր դասավանդման ժամանակահատվածում Դուք սովորեցրիք մեզ գտնել ճշմարտությունը, քայլել ճիշտ ուղով: Արարչական կամքով արարված մեզ փոխանցեցիք ոգու վեհություն, մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, որոնք կիրառում ենք մանկավարժական գործունեության ընթացքում: Հանց կենաց խորհուրդ մեզ կտակեցիք հազար նվիրում: Խորին խոնարհում Ձեր անձնանվեր աշխատանքին, Ձեր նվիրումին և առաքելությանը: Թող մեզ միշտ ուղեկցեն Ձեր մեծ փորձն ու հարուստ գիտելիքները ապագա սերնդի արժանավայել դաստիարակման գործում:



**Անուշ Մաղիւյան  
մանկ. գիտ., թեկնածու, Գավառի  
պետական համալսարանի որակի  
ապահովման կենտրոնի տնօրեն,  
դասախոս**

ԵՊՀ մանկավարժության ամբիոնն իմ անձնակերտման ճանապարհին կարևոր ուղենիշ համարվող կառույցներից է: Այդօրինակ առիթնառն վերաբերմունքը ձևավորվել է 2005 թվականից՝ մագիստրատուրայի «Կրթության կազմակերպում» բաժնում ուսանողուհի լինելու տարիներից: Ինձ գրավում էր ամբիոնում հաստատված կարգուկանոնը, դասախոսների բանիմացությունը, միջանձնային փոխհարաբերություններում գործող մշակույթը: Խորին ակնածանք եմ տածում պրոֆեսորադասախոսական անձնակազմի, մասնավորապես ամբիոնի վարիչ Ն. Հարությունյանի նկատմամբ, որը եղել է նաև իմ գիտական ղեկավարը: Նրա հետ շփումը մտքի շինության և նորոգության մի նոր հնարավորություն է: Անձնական օրինակով, կրթելու յուրօրինակ շնորհով, հաստատական սկզբունքներով նպաստում է յուրաքանչյուրի կայացմանը, ղեկավարած կառույցի կայունությանն ու առաջանցիկությանը:

Մանկավարժության ամբիոնը մի օջախ է, որտեղից մշտապես կարող ես ստանալ մտքի լույս, հոգու ջերմություն և ամբարել զգացմունքի նեկտար: Թող հավերժ արգասաբեր լինի ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ուղին:



**Ասյա Սարգսյան  
Եվրոպական համալսարանի  
Իջևանի մասնաճյուղի տնօրեն,  
մանկ. գիտ. թեկնածու**

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հարգելի՛ պրոֆեսորադասախոսական անձնակազմ, իմ խորին շնորհակալությունն ու երախտագիտությունն եմ հայտնում ձեզ՝ ամբիոնում գիտահետազոտական գործունեությանս տարիներին ինձ՝ որպես հայցորդի ցուցաբերած մեծ ուշադրության և օժանդակության համար:

Մաղթում եմ ձեզ բեղմնավոր գործունեություն՝ ի նպաստ մեր հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը, և արգասաբեր աշխատանք գիտության և կրթության առաջընթացին օժանդակելու գործում:



**Տիգրանուհի Հակոբյան**  
**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի**  
**դասախոս, մանկ. գիտ. թեկնածու**

ԵՊՀ մանկավարժության ամբիոնն առանձնանում է իր աշխատակիցների բարձր պրոֆեսիոնալիզմով և մանկավարժական վարպետությամբ: Ամբիոնում իշխող հատուկ մթնոլորտը պայմանավորված է ամբիոնի աշխատակիցների մարդկային բարձր որակներով և գիտական ձգտումներով: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ամբիոնի դասախոսական կազմին ինձ ցուցաբերած օգնության և աջակցության համար: Հատուկ երախտագիտություն եմ հայտնում ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանին՝ գիտության ասպարեզում դրսևորվելու ինձ ընձեռած հնարավորության, հայցորդին ճիշտ ճանապարհով աննկատ ուղղորդելու կարողության, ինչպես նաև օբյեկտիվ քննադատության համար, ինչը հանգեցնում է դրական արդյունքների և նպաստում մասնագիտական կատարելագործմանը:



**Միթրա Աբդուլլահի  
ԵՊՀ մանկավարժության ամբիոնի  
ասպիրանտ, Իրան**

Ողջուն ԵՊՀ մանկավարժության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին, հատկապես իմ գիտական ղեկավարին՝ հարգարժան պրոֆեսոր Նազիկ Հարությունյանին:

Ես՝ Իրանի քաղաքացի Միթրա Աբդուլլահիս, 2014 թ. ավարտել եմ ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ասպիրանտուրան պրոֆեսոր Նազիկ Հարությունյանի գիտական ղեկավարությամբ, մասնակցել եմ նաև այս ամբիոնի հիմնադրման 93-րդ տարեդարձի առիթով Ծաղկաձորում կայացած գիտաժողովին:

Ցանկանում եմ ջերմորեն շնորհավորել ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հիմնադրման 100-րդ տարեդարձը և ի սրտե երախտագիտությունս հայտնել տիկին Ն. Հարությունյանին, որը գիտական բարձրարժեք ծառայություններ է մատուցում ոչ միայն Հայաստանի հասարակությանը, այլև համաշխարհային մանկավարժությանը:



**Հաբիբ Շահգարի**  
**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի**  
**ասպիրանտ, Իրան**

Ընդունե՞ք իմ ջերմ շնորհավորանքները Իրանի Բուշեի քաղաքից: Հպարտ եմ շնորհավորելու ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հիմնադրման 100-րդ տարեդարձը՝ իմ խորին շնորհակալությունը հայտնելով ամբիոնին անգնահատելի աշխատանքների ու գործունեության համար:

Ես իմ ուսումնառության տարիներին ականատես եմ եղել ԵՊՀ մանկավարժության ամբիոնի, նրա բոլոր անդամների ու դասախոսների, հատկապես ամբիոնի վարիչ և իմ գիտական ղեկավար պրոֆեսոր Նազիկ Հարությունյանի ներդրած ջանքերին և իրանցի ասպիրանտների հանդեպ ցուցաբերած ամենայն աջակցությանն ու համագործակցությանը:

Շնորհակալություն եմ հայտնում ամբիոնին կատարած աշխատանքների համար: Մաղթում եմ Ձեզ նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ:



## **Նասրոլլահ Ասադի ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ասպիրանտ, Իրան**

Չափազանց ուրախակի և հպարտության արժանի առիթ է, որ ԵՊՀ մանկավարժության ամբիոնը տոնում է իր հիմնադրման 100-րդ տարեդարձը:

Արժանի է, որ մենք ևս գնահատենք ու մեծարենք այս ամբիոնի, հատկապես նրա վարիչ, հարգարժան պրոֆեսոր Նազիկ Հարությունյանի կատարած աշխատանքները, ուղղորդումը և աջակցությունը:

Մենք երախտապարտ ենք այս ամբիոնին և մեր գիտական ղեկավար տիկին Ն. Հարությունյանին՝ մեր ասպիրանտական կրթությունը ստանալու և այն հաջողությամբ ավարտելու համար:

Հաջողություններ եմ ցանկանում պրոֆեսոր Ն. Հարությունյանին իր գիտական գործունեության ասպարեզում:

Հարգանքով՝ Նասրոլլահ Ասադի



**Մասուդ Մահմուդի  
ԵՊՀ մանկավարժության ամբիոնի  
ասպիրանտ, Իրան**

Ես ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ասպիրանտուրայի շրջանավարտ (2015 թ.) Մասուդ Մահմուդին եմ, ուրախ եմ շնորհավորելու ամբիոնի հիմնադրման 100-րդ հոբելյանը: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ում ջանքերով ու աշխատանքներով այս բոլոր տարիներին հարատևել է մանկավարժական այս կառույցի գործունեությունը:

Առանձնապես շնորհակալություն եմ հայտնում Մանկավարժության ամբիոնի ղեկավարին՝ պրոֆեսոր Նազիկ Հարությունյանին, Մանկավարժության խորհրդի գիտքարտուղար՝ տիկին Ա. Ղազարյանին:

Շնորհավորում եմ նաև Մանկավարժության ամբիոնն ավարտած և գիտական աստիճանի արժանացած բոլոր ասպիրանտներին և ուսանողներին:

Հուսով եմ, որ Մանկավարժության ամբիոնը, ինչպես միշտ, գինվելով համաշխարհային գիտական առաջընթացիկ գիտելիքներով, ավելի լուսավոր ու բազմակողմ գործունեություն կծավալի:



### **Կարինե Մակարյան Փարաքարի միջնակարգ դպրոցի տնօրեն**

Ցանկանում եմ շնորհավորել Մայր բուհի Մանկավարժության ամբիոնին 100-ամյա հոբելյանի կապակցությամբ: Պատիվ ունեմ համարվելու ձեր շրջանավարտը և կրտսեր ընկերը: Այսօր կրթության ու գիտության բնագավառում դուք մեծ ավանդեք ներդնում՝ նորաստեղծական ու բարենորոգչական գործունեությամբ պահպանելով և զարգացնելով համալսարանական ավանդույթները, կարևորելով կրթության որակը ու գիտական մտքի առաջընթացը: Անաչառ, սկզբունքային, խստապահանջ և միաժամանակ անմիջական ու բարյացակամ ձեր վերաբերմունքն է, որ ուսանողներին ոգեշնչում է ստեղծագործել և առաջընթանալ: Շնորհակալ եմ հայրենանվեր աշխատանքի համար:


Ամենայն բարիք ձեզ, հաջողությունների ու ձեռքբերումների նորանոր հարյուրամյակներ:



**Անահիտ Խլոպուզյան  
ԵՊՀ մանկավարժության ամբիոնի  
հայցորդ, դասախոս**

ԵՊՀ մանկավարժության ամբիոնը իր մեկդարյա պատմության ընթացքում նպաստել է Մանկավարժություն գիտության զարգացմանը և պատրաստել է բազմաթիվ որակյալ մասնագետներ:

Ավարտելով Մանկավարժության ամբիոնի «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագիրը՝ ինձ հնարավորություն ընձեռվեց շարունակելու ուսումնառությունս հայցորդ և ծավալելու աշխատանքային գործունեություն իմ սիրելի Մանկավարժության ամբիոնում:



### **Վիկտորիա Բաղդասարյան ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հայցորդ, դասախոս**

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի համար տարին հոբելյանական է, քանզի մեկ դար առաջ ապագա մանկավարժների համար իր դռները լայնորեն բացեց մեզ համար հարազատ օրրանը:

Հարյուրամյա ամբիոնի արդի գիտակրթական բեղուն գործունեության գրավականը ամենօրյա աշխատանքն է, համախմբումը, որակյալ դասախոսների, աշխատակազմի ներգրավումն ու ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նազիկ Հարությունյանի անխոնջ նվիրվածությունը և անսպառ եռանդի համակցումը: Ամբիոնն իր ողջ ներուժը և կրթական ողջ զինանոցը անմնացորդ նվիրում է իր ուսանողներին գիտելիքներով զինելու վեհ գործին: Ինքս էլ այդ ավանդույթների կրողն ու գործուն մասնակիցն եմ 2007 թվականից մինչ օրս՝ սկզբում որպես ուսանող, ապա՝ նաև ամբիոնի հայցորդ և աշխատակից:

Շնորհավոր տոնդ, մեր սիրելի՛ ու հարազատ ամբիոն, երթդ լինի անկասելի՝ ի փառս Մայր բուհի և մեր պետության:



## **Անուշ Նավասարդյան Երևանի Աշոտ Նավասարդյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն**


Այս տարի ԵՊՀ մանկավարժության ամբիոնի համար հոբելյանական տարի է: Լրանում է ճակատագրի բերումով ինձ հարազատ դարձած ամբիոնի հիմնադրման 100-ամյակը:

Մեր ժողովրդի համար ծանրագույն ժամանակաշրջանում, գիտակցելով կրթության և հասարակության դաստիարակության անհրաժեշտությունը մեր ազգային ինքնությունը պահպանելու գործում, Մայր բուհի հիմնումից կարճ ժամանակ անց մեր ազգի նվիրյալների ջանքերով իր առաքելությունն է սկսում ԵՊՀ մանկավարժության ամբիոնը, որն էլ ստանձնում է կրթության մշակներ կերտելու պատասխանատվությունը:

Շարունակելով մեկդարյա ավանդույթները՝ ԵՊՀ մանկավարժության ամբիոնն այսօր էլ իր գործունեությամբ և գիտական հետազոտությունների շնորհիվ մեծ ներդրում ունի մանկավարժական կրթության, համակարգի բարեփոխման և մանկավարժություն գիտության զարգացման գործում:

Մանկավարժությունը մարդու մտքի և հոգու ճարտարապետություն է, որի պատասխանատուները կամա թե ակամա դառնում են նաև հասարակության դաստիարակության և արժեհամակարգի կերտման պատասխանատուները: Եվ այս առումով Մանկավարժության ամբիոնն իր նվիրյալներով իրական դպրոց է:

Շնորհավորում եմ, սիրելի՛ բուհ, շնորհավորում եմ, հարազատ ամբիոն, և շնորհակալ եմ, որ բախտ եմ ունեցել քո մասնիկը լինելու:



**Թագուհի Մուրադյան  
Եվրոպական լեզուների և հաղոր-  
դակցության ֆակուլտետի դեկանա-  
տի աշխատակից**

«Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագիրը, թերևս, մեր օրերում Երևանի պետական համալսարանում գործող լավագույն մագիստրոսական ծրագրերից մեկն է:

2011 թ. ավարտել եմ «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագիրը և մինչ օրս աշխատում եմ բարձրագույն կրթության կազմակերպման բնագավառում՝ Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկանատում որպես օպերատոր:



## **Անի Արահամյան ԵՊՀ մանկավարժության ամբիոնի հայցորդ, դասախոս**

Յուրաքանչյուրիս կյանքում լինում են իրադարձություններ ու որոշումներ, որ փոխում են մեր կյանքի ընթացքը ու դառնում մեր վաղը՝ մեր ապագան: Հենց այսպիսի իրադարձություն էր իմ՝ «Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագրի ընտրությունը: Ուսումնառությունս մեր ամբիոնում բեկումնային էր. ստացա մասնագիտական մրցունակ ու առաջանցիկ գիտելիքներ, որոնք ամեն օր կիրառում եմ և՛ դասավանդելիս, և՛ աշխատանքում, և, որ ամենակարևորն է, ձեռք բերեցի իմ դասախոս, իմ անփոխարինելի գիտական ղեկավար Նազիկ Հարությունյանին, որի ներդրումն իմ ու բոլորիս կյանքում անուրանալի է:

Հիմա արդեն 100-ամյա ամբիոնի պատմությունը թերթելիս անգամ անգն աչքով տեսանելի է Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի հիմնադիր-տնօրեն, Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն. Հարությունյանի ներդրումը ամբիոնի, իսկ հիմա՝ նաև կենտրոնի ստեղծման ու զարգացման գործում: Ուստի ամբիոնի 100-ամյակի առիթով առաջինը շնորհավորում են հենց մեծանուն գիտնական Ն. Հարությունյանին՝ ամբիոնի պատմության մեջ անջնջելի հետք թողնելու և ամբիոնի թոփալային զարգացումն ապահովելու համար: Երախտապարտ եմ տիկին Հարությունյանին, որ մասն եմ կազմում այս մեծ ընտանիքի, որը նա գլխավորում է, և հպարտ եմ, որ իր օգնությամբ քայլում եմ դեպի գիտություն տանող ճանապարհով, որտեղ նա իմ ուղենիշն է:



## **Անի Մինոնյան ԵՊՀ ռեկտորատի գործավարուհի**

Մանկավարժության ամբիոնի սի-  
րելի՛ անձնակազմ, դուք յուրաքանչյուր  
օր պատասխանատվության մեծ գի-  
տակցմամբ եք մոտենում ձեր գործին՝  
մանկավարժի բարձր կոչմանը՝ ձեր գի-  
տելիքները, ստեղծագործական ողջ նե-  
րուժն ու հոգու ջերմությունը նվիրելով ուսանողների կրթության և  
դաստիարակության սուրբ գործին, նրանց տալով հայեցի կրթու-  
թյուն, նրանց մեջ սերմանելով սեր դեպի հայրենիքը, ընտանի-  
քը: Անձնվիրաբար կրթում եք մեր ազգին և պետությանն ար-  
ժանի, ազգային ու համամարդկային արժեքներին քաջաձանոթ  
ու դրանցով առաջնորդվող զավակներ: Ես իմ երախտագիտու-  
թյան խոսքն եմ ցանկանում հայտնել Մանկավարժության ամ-  
բիոնի դասախոսներին, որոնք անգնահատելի վաստակ ունեն  
սերունդների կրթության ու դաստիարակության գործընթացում  
և ջանք ու եռանդ չեն խնայում, որպեսզի ուսանողների համար  
ուսումնառության տարիները դարձնեն գիտելիքի ամբարման ու  
նոր բացահայտումների ժամանակաշրջան:



**Հայարփի Պողոսյան**  
**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի**  
**«Սոցիալական մանկավարժություն»**  
**կրթական ծրագրի շրջանավարտ**

Լինելով Երևանի պետական համալսարանի, հատկապես համալսարանի հնագույն ամբիոններից մեկի՝ Մանկավարժության ամբիոնի շրջանավարտ՝ մենք հպարտությամբ կարող ենք փաստել, առաջին հերթին, այն գիտելիքների հսկայական պաշարի մասին, որը ստացել են չորս տարիների ընթացքում՝ ձեռք բերելով սոցիալական մանկավարժի որակավորմամբ մասնագիտություն: Մանկավարժության ամբիոնը, դառնալով ինձ համար «երկրորդ տուն», իմ ուսումնառության տարիներին եղավ մի բանալի, որը բացել է և շարունակելու է դեռ բաց անել բազմաթիվ դռներ հետագա կյանքում՝ թե՛ կրթական, թե՛ աշխատանքային ոլորտում, նաև մեծ դեր ունենալ արժեհամակարգի ձևավորման ու ինքնագարգացման գործում:

Երախտապարտ ենք ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին՝ ամբիոնի վարիչ Նազիկ Հարությունյանի գլխավորությամբ, իրենց ունեցած մեծ դերի, գիտելիքների, փորձի փոխանակման, անգնահատելի խորհուրդների, ջերմ վերաբերմունքի, սիրո ու փոխադարձ հարգանքի ձևավորման համար:

Երջանիկ ենք, որ մի մասն ենք կազմել այս հրաշք ընտանիքի, որը ձևավորվել է, արմատներ գցել դեռևս 1921 թ. ու հասունանալով կայունացել է, ամրացել ուսանողների ու ամբիոնի աշխատակազմի, պրոֆեսորադասախոսական կազմի փոխադարձ սիրո, հարգանքի, պրոֆեսիոնալ մոտեցման շնորհիվ:

Շնորհակալ ենք ձեր ազգանվեր գործի համար, շարունակեք կրթել սերունդներ և նորովի մոտեցումներով նոր որակ ու արժեք տալ մանկավարժություն գիտությանը Հայաստանում:



**Սիրանուշ Բդեյան**  
**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի**  
**«Սոցիալական մանկավարժություն»**  
**կրթական ծրագրի շրջանավարտ**

Հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը խորհրդանշող Երևանի պետական համալսարանը շուրջ մեկդարյա իր պատմության մեջ տվել է բազում շրջանավարտներ, որոնք իրենց ավանդն են ներդրել Հայաստանի մտավոր ներուժի հզորացման, մշակութային արժեքների վերանաաստավորման, նոր տեխնոլոգիաների, կրթական ծրագրերի, նոր մասնագիտությունների, ամբիոնների, գիտահետազոտական լաբորատորիաների ստեղծման, երկրի ընդհանուր առաջընթացի գործում: Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը ԵՊՀ այն բացառիկ ենթակառույցներից է, որը, բացի մասնագետներ պատրաստելու այդ մեծ առաքելությունից, շուրջ 100 տարի է՝ ստանձնել է պարտավորություն՝ պատրաստելու առաջին հերթին հոգեպես և բարոյապես հարստացած քաղաքացիներ, որոնք պիտի լինեն նոր Հայաստանի արժեհամակարգի կրողները: Հատուկ պետք է ընդգծեն Մանկավարժության ամբիոնի դերը իմ մասնագիտական կայացման գործում, քանի որ հզոր մտավոր ներուժ ունեցող ամբիոնը որդեգրել է որակյալ կրթական ծառայություններ մատուցելու, մրցունակություն ու գրավչություն ապահովելու քաղաքականություն:

Յուրաքանչյուր մասնագետ, լինի սոցիալական մանկավարժ, թե իրավաբան, պետք է ոչ միայն սիրի ու մեծարի իր մասնագիտությունը, այլև գործի միայն իր խղճի, հայրենիքի, ժողովրդի շահերից ելնելով:

Շնորհակալություն եմ հայտնում կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմին փայլուն դասախոսությունների համար, հատկապես համավարակի պայմաններում հեռավար ուսուցումը

բարձր մակարդակով իրականացնելու և դասավանդումը որակական այլ հարթության վրա ներկայացնելու համար: Մանկավարժության ամբիոնին մաղթում եմ նորանոր հաջողություններ թե՛ Հայաստանի ներսում, թե՛ նրա սահմաններից դուրս: Համոզված եմ, որ Մանկավարժության ամբիոնը դեռ բազում հարյուրամյակներ է տոնելու՝ իր շուրջը համախմբելով հետաքրքրված և նոր գաղափարներով զինված ուսանողների:



**Էմմա Խոջայան**  
**ԵՊՀ մանկավարժության ամբիոնի**  
**«Սոցիալական մանկավարժություն»**  
**կրթական ծրագրի շրջանավարտ**

Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնն իր գործունեությունն է ծավալում արդեն մեկ դար, որի ընթացքում կերտվեցին և արարվեցին հազարավոր ճակատագրեր:

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը մեզ համար դարձավ տուն, տվեց հաջողության բանալի, մասնագիտություն, գիտելիքներ տարբեր բնագավառներից: Այդ գործում մեծ դերակատարում է ունեցել կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմը, որի շնորհիվ մենք զարգացում ապրեցինք, ձեռք բերեցինք մարդկային նոր որակներ և արժեքներ, դարձանք բանիմաց մասնագետներ և, ինչու չէ, պետությանն արժանի քաղաքացիներ:

Հպարտ եմ, որ Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողն եմ եղել և դեռ պետք է շարունակեմ ուսանել որպես մագիստրանտ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                    |    |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Ողջույնի խոսքեր.....                                                                                               | 3  |
| Առաջարան.....                                                                                                      | 8  |
| Մանկավարժության ամբիոնի անցած ուղի                                                                                 |    |
| պատմական ակնարկ.....                                                                                               | 12 |
| ԵՊՀ մանկավարժության ամբիոնի երախտավորները.....                                                                     | 17 |
| Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի<br>ստեղծումը .....                                                  | 36 |
| Մանկավարժության ամբիոնի մասնագիտական<br>կրթական գործունեությունը .....                                             | 39 |
| «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական<br>ծրագիր .....                                                     | 42 |
| «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»<br>մագիստրոսական կրթական ծրագիր .....                                      | 49 |
| «Սոցիալական մանկավարժություն» կրթական<br>ծրագիր բակալավրիատում .....                                               | 52 |
| Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի<br>կրթական ծրագրերի մասնագիտական և մանկավարժական<br>պրակտիկան ..... | 60 |
| Ավարտական աշխատանքների և մագիստրոսական<br>թեզերի պաշտպանությունն ամբիոնում .....                                   | 64 |
| «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի<br>կուրսղեկների գործունեությունը .....                                | 67 |
| Մանկավարժության ամբիոնի գիտահետազոտական<br>աշխատանքները .....                                                      | 69 |
| Մանկավարժության ամբիոնի կնքած միջբուհական<br>պայմանագրերը .....                                                    | 83 |
| ԵՊՀ մանկավարժության ամբիոնի համագործակցությունը<br>Հայաստանի բուհերի հետ .....                                     | 85 |
| ԵՊՀ մանկավարժության ամբիոնի մասնակցությունը<br>միջազգային գիտաժողովներին և թրեյնինգներին .....                     | 86 |

|                                                                                                                        |     |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| Մանկավարժության ամբիոնի համագործակցությունը<br>սփյուռքի հայկական գաղթօջախների հետ .....                                | 88  |
| Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի<br>«Կրթությունը 21-րդ դարում» միջազգային<br>գիտամեթոդական հանդեսը ..... | 90  |
| ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման<br>կենտրոնի ուսանողական կառույցները.....                                     | 93  |
| Ուսանողական միջոցառումներ .....                                                                                        | 102 |
| ԵՊՀ մանկավարժության ամբիոնի ասպիրանտների,<br>հայցորդների և շրջանավարտների երախտագիտության<br>խոսքերը.....              | 113 |

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ  
ԱՄԲԻՈՆԻ 100-ԱՄՅԱ  
ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Գրքի շապիկին Երևանի պետական համալսարանի  
կենտրոնական մասնաշենքի նկարն է:

Ստորագրված է տպագրության՝ 28.07.2021:  
Չափսը՝ 60x84  $\frac{1}{16}$ : Տպ. մամուլը՝ 9:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.ysu.am](http://www.publishing.ysu.am)